Azg
armenian daily

21 ՅՈՒՆԻՍ 2000 ՇԱԲԱԹ 114 (2082)

Ռուս սահմանապահի սպանության կապակցությամբ Ռուսաստանը բողոք է հայտնել Թուրքիային

ԵՐԵՎԱՆ, 20 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: Հայ-թուրքական սահմանում հունիսի 18-ին ռուս սահմանապահ-պայմանագրային Արկադի Զյաբլիցեւի սպանության կապակցությամբ Ռուսաստանը բողոք է հայտնել Թուրքիային: Ինչպես «Նոյյան տապանին» հայտնեցին Հայաստանում Ռուսաստանի ՍԳԾ օպերատիվ խմբից, հունիսի 21-ին կսկսվի միջադեպի երկկողմ ռուս-թուրքական հետաքննությունը:

Հաղորդվեց նաեւ, որ Ա. Զյաբլիցեւն ինքն է խախտել սահմանային ռեժիմը, սակայն դրան դրդել են թուրք սահմանապահները, որոնք նրան ցույց են տվել կասկածելի բովանդակության լուսանկարներ եւ առաջարկել են միասին ծխել: Դրան հետեւած միջադեպի արդյունքում Զյաբլիցեւն սպանվել է ինքնաձիգ հրացանից թիկունքից արձակված յոթ կրակոցով, ինչպես տեղեկացրել էր **«Ազգ»ը** երեկվա համարում:

ՄՈՍԿՎԱ

Քոչարյան-Ալիեւ դեմ առ դեմ իններորդ հանդիպումը

Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները խոսում են փոխզիջումների մասին. Մանրամասները շարունակվում են պահվել գաղտնի

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ
Մոսկվա

Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը երեկ ընդարձակ հարցազրույց է տվել մոսկովյան «Նեզավիսիմայա գազետա» ազդեցիկ օրաթերթին, որտեղ անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը, այդ հարցում երկկողմ փոխզիջումներին, ասել է. «ԵԱՀԿ Մինսկի խումբը (Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսիա) շարունակում է իր միջնորդական առաքելությունը: Անցյալ տարվա ապրիլից սկսվել են Ռոբերտ Քոչարյանի եւ իմ անմիջական շփումները: Մենք բանակցություններ էինք վարում, երկուսս էլ այն կարծիքին էինք, որ հակամարտությունը պետք է լուծել խաղաղ ճանապարհով, ընդ որում ե՛ւ Հայաստանը, ե՛ւ Ադրբեջանը պետք է փոխզիջումների գնային: Սակայն հոկտեմբերի 27-ի ՀՀ ԱԺ-ում կատարված ահաբեկչությունը փոխեց Հայաստանի ներքաղաքական իրավիճակը: Հոկտեմբերի 27-ից հետո Ռոբերտ Քոչարյանի եւ իմ շփումները դադարել են: Պետք է ասեմ, որ հայկական զինված ուժերը բռնազավթել են Ադրբեջանի 20 տոկոսը, 1 մլն ադրբեջանցիներ էվել են իրենց մշտական բնակավայրերից: Հիմա պատերազմ չկա, բայց դեռ խաղաղության չենք հասել, իսկ դրան հասնելու համար հայերը պետք է դուրս գան գրավյալ շրջաններից, որպեսզի մարդիկ վերադառնան իրենց օջախները, պետք է վերականգնվի Ադբեջանի տարածքային ամբողջությունը: Մենք լավատես ենք եւ կարծում ենք՝ հնարավոր է դրան հասնել: 1997 թ.-ին Ռուսաստանը թաքուն Հայաստանին տրամադրեց 1 մլրդ դոլարի զենք: Մենք չենք հասկանում, նպատակը պարզ չէ, թե ինչու պետք է փորր Հայաստանում լինի այդքան զենք»:

Տես էջ 8

ԱԺ խոսնակի չափազանց ակտիվ արտաքին «քաղաքական գործունեությունը» կարող է հանգեցնել պատասխանատվության

ԵՐԵՎԱՆ, 20 ՀՈՒՆԻՍ, ՍՆՍՐՔ: Հայաստանի խորհրդարանի խոսնակ Արմեն Խաչատրյանի չափազանց ակտիվ արտաքին քաղաքական գործունեությունը կարող է հանգեցնել վերջինիս պատասխանատվությանը: Հայաստանի խորհրդարանի խոսնակի հերթական արտասահմանյան ուղեւորությունից հետո Ազգային ժողովի կուլուարներում կրկին սկսել են լուրեր պտտվել ՀՀ ԱԺ նախագահի պատասխանատվության նպատակահարմարության շուրջ: Հունիսի 10-17-ին Խաչատրյանը մասնակցել է ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովին եւ Սանկտ Պետերբուրգում կայացած տնտեսական բիզնես-համաժողովին: Վերջին 20 օրերի ընթացքում, նա նաեւ հասցրել է այցելել Իտալիա եւ Ալբանիա: Մինչեւ հունիսի վերջը նախատեսվում է նաեւ ԱԺ-ի խոսնակի այցելությունը Ստրասբուրգ:

Ինչպես նշել է «Միասնություն» դաշինքի ներկայացուցիչ, պետահրավական հարցերի գծով խորհրդարանական հանձնաժողովի նախագահ Վիկտոր Դալլաքյանը, իրոք հանրապետության բնակչությունը դժգոհություն է հայտնում Արմեն Խաչատրյանի գործունեության եւ արտասահման կատարվող հաճախակի այցելությունների առնչությամբ, սակայն «Միասնություն» դաշինքն առայժմ չի քննարկել խոսնակի պատասխանատվության հարցը:

Դալլաքյանի խոսքերով, անկախ այդ ուղեւորություններից կամ անպատասխանատվությունից, անհանդուրժելի է այն հանգամանքը, որ պետության երկրորդ դեմքը հանդիսացող Արմեն Խաչատրյանը բացակայում է այնպիսի կենսականորեն կարեւոր փաստաթղթերի քննարկման ժամանակ, ինչպիսիք են պետբյուջեն, կառավարության գործունեության ծրագիրը, 1999 թվականի բյուջեի կատարողականության շուրջ կառավարության զեկույցը: Խորհրդարանականի խոսքերով, փաստորեն, երկրի օրենսդրական մարմնի ղեկավարը չի մասնակցել քաղաքական փաստաթղթերի քննարկմանը, չի արտահայտել իր կարծիքը եւ, բնականաբար, դուրս է մնացել քաղաքական գործընթացներից: Դեռ ավելին, եթե Խաչատրյանը վճռական լիներ իր գործողություններում եւ կառավարության ծրագրի ու բյուջեի քննարկմանը հրավիրեր Ռոբերտ Քոչարյանին, ինչը պահանջում էին որոշ պատգամավորներ, ապա պետության ղեկավարն անպատճառ ներկա կլիներ այդ կարեւոր հարցերի քննարկմանը, նշեց Դալլաքյանը:

Տես էջ 8

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԳՈՐԾ

Նախաքննությունը կավարտվի ամսվա վերջին

ԵՐԵՎԱՆ, 20 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: Հոկտեմբերի 27-ի գործով նախաքննությունը կավարտվի ամսվա վերջին, եւ մոտ օրերս կորոշվի՝ գործը մեկ միասնակա՞ն, թե՞ առանձնացված վարույթներով մտնի դատարան: Այս մասին հայտնեց ՀՀ զինդատախազության քննչական բաժնի պետ, նախաքննությունն իրականացնող քննչական խմբի ղեկավար Արտակ Հարությունյանը:

Պրն Հարությունյանը նշեց, որ մեղադրյալներ Մուշեղ Մովսիսյանի եւ Նաիրի Բաղալյանի մասերով դեռեւս որոշ հանգամանքներ են ստուգվում, հետո միայն որոշում կընդունվի նշված մասերով գործերը կարճելու մասին: Գործով մեղադրյալները ներկայումս 17-ն են, որոնցից 13-ը կալանքի տակ են: Նախկինում որպես մեղադրյալներ ներգրավված անձանցից երկուսի՝ ՀՀ նախագահի խորհրդական Ալեքսան Հարությունյանի եւ Ազգային հեռուստատեսության գործադիր տնօրենի տեղակալ Հարություն Հարությունյանի քրեական հետապնդումը դադարեցված է, խափանման միջոցը՝ վերացված, նրանց մասերով քրեական գործը կարճված է՝ հանցակազմի բացակայության պատճառով: Պրն Հարությունյանը նշեց, որ նախկինում նրանցից առաջինի նկատմամբ ահաբեկչական ակտին դրդելու եւ երկրորդի նկատմամբ՝ ահաբեկչական ակտին օժանդակելու մեղադրանքներ ներկայացվել են գործով ձեռք բերված ապացույցների հիման վրա, սակայն հետագայում մի շարք ապացույցներ բազմակողմանի եւ օբյեկտիվ ստուգվելուց հետո հերքվել են եւ արժանացել համապատասխան իրավական գնահատականի՝ ապացույցների համակցության մեջ:

Ի պատասխան թղթակցի հարցի, թե ինչով է պայմանավորված Ա. Հարությունյանի եւ Հ. Հարությունյանի մասերով վարույթները կարճելու որոշումներում ծեծի եւ խոշտանգումների հետեւանքով իրականությանը չհամապատասխանող ցուցմունքներ տալու մասին նշումը, Արտակ Հարությունյանն ընդգծեց, որ որոշումներում նշված է սոսկ Նաիրի Հունանյանի բերած պատճառաբանությունը: Քննությանը խորթ մեթոդներով Նաիրի Հունանյանից ցուցմունքներ վերցնելը քննչական խմբի ղեկավարը միանշանակ հերքում է, ընդգծելով, որ նման բան երբեւէ չի եղել:

Արտակ Հարությունյանը հայտնեց, որ օրերս ՀՀ զինդատախազությունը դիմել է դատարան գործով 8 մեղադրյալների՝ Նաիրի եւ Կարեն Հունանյանների, Դերենիկ Բեջանյանի (Բեջանովի), Վռամ Գալստյանի, Էդուարդ Գրիգորյանի, Ատոմ Կնյազյանի, Համլետ Ստեփանյանի եւ Արմեն Հարությունյանի կալանքը երկու ամսով երկարացնելու միջնորդություններով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐԾԱԴՐՈՒՄՆԵՐ

Ինչո՞ւ կալանքից ազատվեցին մեղադրյալները, եթե քննչական խմբի խախտումներն անէական էին

ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հոկտեմբերի 27-ի ահաբեկչության գործը քննող քննչական խմբի դեմ անցնող ամիսներին մի քանի բացարկ է ներկայացվել գործով մեղադրյալների կողմից, որոնց բոլորին ՀՀ գլխավոր դատախազը մեկ պատասխան է ունեցել՝ քննչական խմբի կողմից էական խախտումներ թույլ չեն տրվել: Նույն պատասխանը տրվեց նաեւ մեկ օր առաջ մեղադրյալ Նաիրի Հունանյանի գրավոր բացարկին: Վերջին օրերին «ՀՀ» օրաթերթին տրված հարցազրույցում ՀՀ գլխավոր դատախազ Բորիս Նազարյանը մեղադրյալներից 4-ին կալանքից ազատելու վերաբերյալ լրագրողի հարցումին գրեթե նույն կերպ է պատասխանել, որ նրանք կալանավորվել էին մեկ անձի ցուցմունքով եւ ազատվեցին կալանքից, քանի որ վերջինս փոխել է իր ցուցմունքները: Դատախազի այս արտահայտությունը չի՞ գալիս ասելու, որ քննչական խմբի կողմից թույլ տրված էական խախտումները փաստ են, եւ որ հանրապետության գլխավոր դատախազն անհրաժեշտ հսկողություն չի իրականացրել գործի քննության ընթացքում, մինչդեռ պարբերաբար վստահեցնում էր այդ մասին: **«Ազգը»** իր նախորդ համարում տեղեկացնելով, որ ՀՀ գլխավոր դատախազը մերժել է հերթական բացարկը, եւ մեծ ցանկություն ունենալով այդ կապակցությամբ իրավաբանական մեկնաբանություն ստանալ՝ չհաջողվեց, ինչը անում ենք այսօր, ոչ այնքան ուշացած: Քանի որ «էական խախտումների» մասին առաջին ահազանգողը 27-ի գործով նախկին մեղադրյալ Ալեքսան Հարությունյանի փաստաբան Ռուբեն Սահակյանն էր, նրան խնդրեցինք մեկնաբանել դատախազի բացարկը մերժելու մասին հերթական որոշումը: Չնայած նրա պատասխանյալի մասով քրեական գործը կարճվել է արդեն:

– ՀՀ գլխավոր դատախազի որոշման մեջ ասվում է, թե բացարկը մերժվում է, քանի որ էական խախտումներ թույլ չեն տրվել քրեական գործի քննության ընթացքում: Փաստորեն, դատախազն ընդունում է, որ խախտումներ թույլ են տրվել, միայն թե դժվար է կռահել, թե ինչ խախտումներ են: Սակայն չի պարզաբանվում, թե ինչպե՞ս է գլխավոր դատախազը պարզել, որ էական խախտումներ թույլ չեն տրվել՝ բացատրություններ՞ է վերցրել քննիչներից, քննչական խմբի ղեկավար Արտակ Հարությունյանի՞ց, Գագիկ Ջհանգիրյանի՞ց, որոնք պետք է ասեին մեզ խախտումներ ենք թույլ տվել: Ուսումնասիրել է քրեական գործի նյութերը եւ դրանից հետեւություններ՞ արել: Եթե դատախազն ուշադիր ուսումնասիրեր գործը, ապա հարյուրավոր խախտումներ կգտներ, ընդ որում էական, հանցավոր գործողությունների փաստեր կարող էր արձանագրել:

Տես էջ 2

ԼՂՀ. Ընտրությունները կայացել են բոլոր ընտրատարածքներում

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 20 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: Հունիսի 19-ին ԼՂՀ մայրաքաղաքում միջազգային դիտորդների մասնակցությամբ կայացավ ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Սերգեյ Դավիդյանի մամլո ասուլիսը՝ նվիրված հունիսի 18-ին կայացած ԼՂՀ Ազգային ժողովի ընտրությունների նախնական արդյունքներին: ԿԸՀ նախագահը հայտարարեց, որ ընտրությունները կայացած են ճանաչվել բոլոր 33 ընտրատարածքներում: Դրանց մասնակցել է քվեարկության համար ցուցակներում ընդգրկված բոլոր ընտրողների գրեթե 60 տոկոսը: Ինչպես ասաց Ս. Դավիդյանը, ընտրությունների ընթացքում լուրջ խախտումներ չեն գրանցվել, եւ ԿԸՀ-ում չի ստացվել որեւէ գրավոր բողոք: Ընտրված 33 պատգամավորներից 9-ը ներկայացնում են ՀՅԴ-ն, մեկը «Արմենական» կուսակցության անդամ է, 13-ին պաշտպանում էր «Ժողովրդավարական Արցախ» միությունը հասարակական-քաղաքական կազմակերպությունը, իսկ 10-ը առաջադրվել էին քաղաքացիական նախաձեռնությամբ: Քվեարկության վերջնական արդյունքները կհրապարակվեն երեք օրից:

Լիբանանի դեսպանը՝ «Ազգի» խմբագրությունում

Երեկ Հայաստանում Լիբանանի դեսպան պրն Թոնի Բաղավին այցելեց մեր խմբագրություն: Թեեւ այցը քաղաքավարական էր, **«Ազգի»** քաղաքական մեկնաբանների եւ գլխավոր խմբագրի հետ պրն դեսպանի զրույցը վերածվեց ավելի խոշոր քննարկման, որի թեման, բնականաբար, շոշափեց հայկական Լիբանանի հարավից իսրայելական ուժերի ոչ ամբողջական հեռացումից հետո ստեղծված նոր իրավիճակը: Անդրադարձ եղավ նաեւ Հայաստան-Լիբանան հարաբերություններին: Պրն դեսպանի բնորոշմամբ՝ Լիբանանը դուռն է Միջին Արեւելքի, իսկ Հայաստանը՝ կովկասյան եւ միջինասիական երկրների, հետեւաբար առաջին հերթին այդ դռները պետք է ավելի լայն բացվեն միմյանց առջեւ:

ԱԶԳ

ՊԱՏԱՇԽԱՆ

ԱՍՈՒԼԻՍ

Սփյուռքի հետ հարաբերությունների գեղեցիկ հեքիաթը

Այս անգամ հեքիաթասացի դերում հայրենիք-սփյուռք համագործակցությունը համակարգող կոմիտեն էր

Անցյալ տարվա սեպտեմբերին կայացած Հայաստան-սփյուռք համաժողովը սկզբնական շրջանում մեծ ոգեւորություն եւ հարաբերությունների վերանայման հույս էր առաջ բերել թե սփյուռքահայության եւ թե տեղացիներիս տրամադրություններում: Դեռեւս այն ժամանակ որոշվել էր ստեղծել սփյուռքի հետ հարաբերությունները համակարգող պետական իմ պետության հովվանավորությունը վայելող մի կառույց, ինչը, սակայն, անիրականանալի մնաց հոկտեմբերի 27-ի ահաբեկչության պատճառով: Կառույցի գաղափարը հետաքրքրեց որոշ քաղաքական ուժերի, եւ վերջերս 12 կուսակցություններ հռչակագիր ստորագրեցին, որ ստեղծում են հայրենիք-սփյուռք համագործակցությունը համակարգող կոմիտե:

Երեկ վերոնշյալ կոմիտեի նախագահողներն ասուլիս էին հրավիրել: Կոմիտեի փոխնախագահ եւ հնչակյան ՍԴԿ ատենադպիր Զ. Հակոբյանը, Առաջադիմական միացյալ կոմկուսի փոխնախագահ Ս. Ստեփանյանը, ՍԻՄ քաղաքական խորհրդի անդամ Ա. Պետրոսյանը ներկայացրին իրենց պատկերացումները սփյուռքի հետ հարաբերությունների կարգավորման վերաբերյալ: Նշեցին, որ օրերս հանդիպում են ունեցել արտգործնախարար Օսկանյանի հետ եւ առաջարկել են օժանդակել իրենց հարաբերությունները համակարգող նախարարություն ստեղծելու գործում: Բացի այդ բարձրացրել են «Համահայկական բանկ» ԲԲԸ-ի ստեղծման եւ «Հայաստան-սփյուռք ազգային խորհրդարան» ունենալու հարցերը: Արտգործնախարարը տեղեկացրել է, որ պետական կարգավիճակով նմանօրինակ մի կառույց ունենալու գաղափարը մոտ ապագայում կհրապարակվի ստորագրված հրամանագրի տեսքով, իսկ նախարարություն հիմնելու տարբերակը ներկայումս օրակարգում է՝ մեծ ծախսերի հետ կապված: Այսպիսով, արդեն ստեղծված կոմիտեն, որ հասարակական հիմունքներով է գոյատեւելու, ծրագրում է համագործակցել ստեղծվելիք հարցեր էլ կլուծի նույն պետական կոմիտեն օգնելով հասարակականին: Ժխտելով արդեն վաղուց ի վեր գործող սփյուռքի կոմիտեի փորձն ու նշանակությունը՝ այս կոմիտեն, այնուամենայնիվ, շարունակում է պնդել իր գոյության անհրաժեշտությունը, իսկ վերոհիշյալ կառույցի հետ պատրաստվում է անպայման համագործակցել:

Միջամտելով նշենք, որ ստեղծված միտեն, իր որդեգրած ծրագրերի համեմատությամբ (որոնք, ի դեպ, որպես ժառանգություն վերցրել է հայտնի համաժողովի ծրագրերից) դեռեւս չի տիրապետում բավականաչափ լծակների եւ, ինչո՞ւ չէ, աջակցության: Հռչակագիրը ստորագրած այդի ընկնող կուսակցությունների թվում հիշատակելի են, թերեւս, լոկ ՍԻՄ-ն ու Կոմկուսը, որոնցից առաջինը, որը տեղեկությունների համաձայն, ինչ-ինչ պայմաններով է միացել նախաձեռնողներին: Շատերը ԱԺՄ-ն, ՀՅԴ-ն, ՀՌԱԿ-ը, ՀՀԿ-ն եւ այլք, չեն ստորագրել վիճելի կամ անիրատեսական համարելով «Հայրենիք-սփյուռք միություն» կուսակցության նախագահ Հրաչ Տեր-Եսայանի նախաձեռնությունը եւ սփյուռքի հետ հարաբերությունները հիշյալ կոմիտեի միջոցով կարգավորելու փորձը: ՀՌԱԿ-ը, օրինակ, իր ուղերձում նշում է, թե կուսակցության ծրագրում հաշվի չեն առնված սփյուռքի հոգեբանական առանձնահատկությունները, եւ հայ ազգը բերված է մի ընդհանուր բանաձեւի, ինչն իմքնին անիրատեսական է: ՀՅԴ-ն իր հերթին կասկածանքով է գնահատում ծրագրի այն դրույթը, ուր նշվում է սփյուռքի գաղթօջախներում ընտրություններ անցկացնելու եւ յուրատեսակ այլընտրանքային խորհրդարան ձեւավորելու մասին: Խորհրդարանի կարգավիճակի եւ լիազորությունների հարցերը բավականաչափ մշուշոտ են թվում նաեւ ՀՀԿ-ին:

Անշուշտ, ցանկալի կլիներ, որ վերջապես ունենայինք սփյուռքը որպես երեւույթ եւ գործոն ճիշտ պատկերացնող եւ այդ երեւույթի հետ հարաբերություններ կառուցող մի մարմին, սակայն «Հայրենիք-սփյուռք միություն» կուսակցության նախաձեռնած համակարգող կոմիտեն հենց այդ երկար սպասված մարմի՞նն է. դժվար է ասել, կասկածելի է: Կոմիտեն նախ եւ առաջ լավատեղյակ չէ սփյուռքի իրական դեմքի ու բնութագրին, լավատեղյակ ավանդական կուսակցություններից երկուսն էլ՝ ՀՌԱԿ-ն ու ՀՅԴ-ն, որոնք սփյուռքի գաղթօջախներում իրենց կառույցներն ու կշիռն ունեն, ինչպես պարզվեց, նախընտրել են չստորագրել հռչակագիրը: Պակաս վիճելի չէ նաեւ «Համահայկական բանկի» ստեղծման գաղափարը. այդ բանկում, ըստ կոմիտեի ծրագրի, կենտրոնացվելու են համայն հայության ֆինանսական միջոցները, որոնք այնուհետեւ, որոշ տոկոսներով, տրամադրվելու են արդեն հիշատակված խորհրդարանին: Արդեն իսկ պարզ է, որ ծրագիրն ավելի շուտ նման է գեղեցիկ ցանկության կամ հեքիաթի...

Իսկ սփյուռքի հետ արժանավայել եւ ոչ թե նախկինի պես, ասես ողորմություն հայցող ու ընդունող մեր հարաբերությունները սպասում են վերաբննդի: Իրական հարաբերություններն օդում չեն կառուցվում. որպեսզի համագործակցես, պիտի նախ ճանաչես ու հասկանաս դիմացինիդ:

ԱՆՈՒՇ ԲԱԲԱՅԱՆ

Քաշքուկ՝ կանգառի բացակայության պատճառով

«Ազգի» խմբագրությունը նամակ-բողոք էր ստացել Նոր Նորքի 5-9-րդ զանգվածների բնակիչներից Նորքի երկրորդ զանգվածի շուկային կից կանգառի բացակայության եւ գեշնուղու հակահիգիենիկ վիճակի վերաբերյալ: Լինելով տեղում, շուկայի մոտ, հաստատեցինք, որ «Ինտերմոստոր Արմենիա» խանութի դիմաց կանգառ հիշեցնող որեւէ կառույց չկա: Մարդիկ ճամպրուկներով ծանրաբեռնված շուկայից հասնում են այստեղ, ուր միմյանց հերթ չտալով խռնվում են երթուղային տաքսիներ, ավտոբուսներ, տրոլեյբուսներ: Հոգնատանջ ուղեւորները, ինչպես գրել են մեր նամակագիրները, ստիպված են տասնյակ մետր քայլել հարմար տրանսպորտից օգտվելու համար: Նստարաններ չլինելու պատճառով մարդիկ նստում են մայթեզրի երկաթե ճաղերին, անընդհատ այս կողմ-այն կողմ վազվզում, որպեսզի մեքենաների ազդանշանների ու վարորդների մեղադրական հայացքների ներքո բաց չթողնեն անհրաժեշտ տրանսպորտը:

Խիստ անմխիթար ու հակահիգիենիկ է գեշնուղու վիճակը: Այդտեղով անցնելիս հնարավոր է վարակվել մաշկային որեւէ հիվանդությամբ, այնքան որ կեղտոտ է տարածքը, իսկ գարշահոտությունից կարելի է ընչաքեղ լինել: Գեշնանցումը քաղաքապետարանի ենթակայության տակ է: Շաբաթական գոնե երեքից չորս անգամ անհրաժեշտ է մաքրել, լվանալ: Այլապես գեշնուղին վարակի աղբյուր կարող է դառնալ:

Նոր Նորքի թաղապետ Մկրտիչ Մինասյանը հայտնեց, որ պատրաստ է կանգառի նախագիծը, եւ 70 մետր տարածքում կանգառը կկառուցվի շուկայի ասիճանների հարթակից փիչ վերեւ: Կանգառի կառուցման աշխատանքները կսկսվեն մոտ օրերս եւ կավարտվեն տասը օրից: Մինչ այդ՝ մարդիկ շարունակ անհարկի քաշքուկի մեջ են ընկնում արհեստականորեն ստեղծված դժվարությունների պատճառով:

ՆԱՐԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ

Երանի թե Հայաստանում այսպիսի ընտրություններ անցկացվեն

Հավաստում են Արցախի խորհրդարանական ընտրությունների ՀՌԱԿ դիտորդները

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններին իբրեւ դիտորդ մասնակցել են նաեւ ՀՌԱԿ կուսակցության անդամներ Վազգեն Կակոյանը եւ Բաբկեն Բաղդասարյանը: Երեկ այցելելով «Ազգի» խմբագրություն, նրանք պատմեցին հետեւյալը. «Տպավորությունը շատ լավ էր: Եղանք Ստեփանակերտի 1 եւ Հադրութի 3 տեղամասերում: Հադրութի բնակչությունը շատ ակտիվ էր մասնակցում ընտրություններին: Ժողովրդի մեջ ոչ մի ահաբեկչություն, վախ չկար: Ասում էին, թե նախկինում նույնիսկ թեկնածուին չեն տեսել, Ստեփանակերտից «նշանակված» է եղել, թե ով պետք է «ընտրվի»: Այս անգամ ազնիվ ընտրություն է գնացել, թեկնածուները ներկայացել են ընտրողներին, գիտեն՝ ովքեր են: Բուն ընտրությունները շատ ազատ էին, վստահված անձինք ոչ մի բողոք չունեին: Որեւէ բռնություն, քվեաթերթիկների «լցնում», քվեատուփերի հափշտակություն, անախորժ ոչ մի միջադեպ չեղավ: Քվեախցիկներ մարդիկ միայնակ էին մտնում, կային շրջիկ քվեատուփեր, որոնք հիվանդներին ու այլ անկողնայիններին էին հասցնում հանձնաժողովների անդամներն ու պարտադիր՝ բոլոր թեկնածուների վստահված անձինք: Ժողովուրդն ուրախ էր, թեեւ ընտրակաշառք չկար: Ընտրությունների օրը որեւէ քարոզչություն չէր կատարվում: Երկու տեղամասում մեկական թեկնածու կար, 1 տեղամասում՝ 3 թեկնածու: Մասնակցեցին նաեւ քվեատուփերի բացմանը: Չայների հաշվառումը կատարվեց ազնվորեն եւ օբյեկտիվ: Օրենքի որեւէ անտեսանելի խախտում չենք նկատել: Երանի թե Հայաստանում այսպիսի մաքուր ընտրություններ անցկացվեն», եզրակացրին ՀՌԱԿ դիտորդները:

Այսօր բավարար չափով ուղղաթիռներ եւ օդաչուներ չկան

Զոհված օդաչուներին նվիրված երեկո

Արցախյան պատերազմում զոհված տասնհինգ օդաչուների հիշատակին նվիրված երեկո էր կազմակերպվել հունիսի 18-ին Հ. Պարոնյանի անվան թատրոնում:

Երեկոյին ելույթ ունենալով՝ Զորի Բալայանը վերհիշել է ադրբեջանցիների կողմից մեր ինքնաթիռների եւ ուղղաթիռների ոչնչացման ողբերգական օրինակներ՝ ինչպես 1990-ի օգոստոսի 1-ին ZR-40-ի ոչնչացումը՝ Երեւան-Ստեփանակերտ չվերթի ժամանակ, 1993-ի ապրիլի 17-ին Մu-8 ինքնաթիռի խորտակվելը, որը տարավ ոչ միայն անձնակազմի կյանքերը, զոհվեց նաեւ արցախյան շարժման անվախ ներկայացուցիչ Շահեն Մեղրյանը:

Զորի Բալայանը ելույթի ժամանակ նշել է, որ այսօր չենք հիշում բոլոր այդ մարդկանց անունները, ում առաջին հերթին պարտական ենք Շուշիի գրավման եւ Արցախի բոլոր հաղթանակների համար: Ավելին, Զորի Բալայանը նշել է, թե այսօր Ղարաբաղում չունենք նման պրոֆեսիոնալներ: «Այնտեղ մեզ մնացել են միայն երկու ուղղաթիռ եւ վեց ZR տիպի ինքնաթիռ: Օդաչուներից շատերն էլ թողել են այդ աշխատանքը: Եվ սա այն դեպքում, երբ չունենք որեւէ հաստատություն, որտեղ պատրաստվեին նման մասնագետներ», նշել է Զ. Բալայանը՝ հիշեցնելով, որ հրադադարը դեռեւս խաղաղություն չէ:

Ի դեպ, մեր իշխանավորներից որեւէ մեկը չի պատվել երեկոն իր ներկայությամբ:

Ինչո՞ւ կալանից ազատվեցին ...

Սկիզբը էջ 1

Թեկուզեւ այն, որ Հարություն Հարությունյանը, Մուշեղ Մովսիսյանը, Ալեքսան Հարությունյանն, որոնք պնդում էին, որ իրենց նկատմամբ բռնություններ են գործադրվել, իսկ Ալեքսան Հարությունյանն ասում էր, որ առերեսման ժամանակ Նախիր Հունանյանին ծեծված է տեսել՝ փաստ չէ", էական խախտում չէ": Եթե ինչական խմբի կողմից խախտումներ թույլ չեն տրվել, ապա ի՞նչն է պատճառը, որ մեկը մյուսի ետեւից ինչական խմբից զինվորական դատախազության ինքիչները դուրս են բերվում:

Կգա օրը, երբ իրական գործի նյութերը կդառնան ողջ հասարակության իմացության առարկան, եւ այն ժամանակ բոլորը կտեսնեն այն աղաղակող խախտումները, որոնք իրականում կան, բայց դրանք չի ուզում տեսնել ու լսել ՀՀ գլխավոր դատախազը: Այսպանից հետո ցանկանում են, որ գործը բացահայտվի: Ինչպե՞ս կարող է բացահայտվել, եթե ինքնության առաջին իսկ օրից միայն մեկ վարկածի վրա են աշխատել՝ ահաբեկչությունը ՀՀ նախագահի ու նրա մերձակա շրջապատի գործն է: Իրենք փչեցին այդ փուչիկը, իրենք էլ հարկադրված պայթեցրին այն: Իսկ գլխավոր դատախազը լուրջ խախտումներ չի տեսնում, բող բարի լինի բացել իրական օրենսգիրքը եւ համադրի իրական գործի որոշ նյութերի հետ, այդ դեպքում ստիպված կլինի փոխել իր կարծիքը: Միաժամանակ կարծանագրի, որ ոչ թե էական խախտումներ չկան, այլ ինչական խմբի գործողություններում առկա են մի շարք հանցագործությունների հատկանիշներ: Եկեք հիշենք, թե ինչ հայտարարություններով էին հանդես գալիս Արտակ Հարությունյանը եւ, մասնավորապես, Գագիկ Ջհանգիրյանը: Ինչպիսի՞ խոստումներ էին տալիս այս կամ այն անձին կալանավորելու վերաբերյալ, եւ այսօր ի՞նչ է մնացել, նրանց ասածներից ո՞րն է հիմնավորվել: Թերեւս միայն այն, որ ահաբեկչությունը Հունանյանի ու նրան հանցակիցների կատարածն է, բայց դա ապացուցման կարիք չի զգում:

Որոշ գրչակներ կրքերը բորբոքելու համար ցինիկաբար ասում են, թե իբր կգա մի օր, երբ կպարզվի, որ Հունանյանն ու մյուս չորսը չեն ահաբեկչությունը կատարել: Այն կարծիքին եմ, որ եթե գործի ինքնությունը շարունակվի մնալ զինդատախազության վարույթում, ես նույնպես չեմ բացառի նման ընթացքը: Գլխավոր դատախազը շարունակում է վստահել ինչական խմբին եւ անձամբ զինդատախազ Ջհանգիրյանին: Թող վստահի, բայց վստահությունը չխաթարվե՞ց այն բանից հետո, երբ մեկը մյուսից ետեւից բաց թողնվեցին նրանցից չորսը: Դրանով չեմ ուզում ասել, թե նրանք պարտադիր ազատվեցին կալանից, դրանով ուզում եմ ասել, որ նրանք պարտադիր էին կալանավորվել: Իսկ գլխավոր դատախազը ոչ մեկին չի պատժել պարտադիրաբար կալանելու համար, ի՞նչ է, դրանք էական խախտումներ չե՞ն: Չէ՞ որ այսօր արդեն փաստ է, որ այդ չորսի նկատմամբ պարտադիրություններ եղել են: Կարելի է էլի բաներ ասել, բայց չեմ ուզում տարածվել: Գլխավոր դատախազն այս գործի ինքնության վրա հսկողություն իրականացնողը պետք է լինի, նա պարտավոր է պատասխանատու մոտեցում ցուցաբերել եւ ոչ թե համերկրացուն հովանավորի կամ թերացումները կոծկի: Սրափության կոչ եմ անում:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 8 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562863, AT&T (3742) 151065,
e-mail: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱԼԵՔՍԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲՅԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՉՕՐԵՆՆ / հեռ. 529353
Համակարգչային ծառայություն / 562941
Apple Macintosh
համակարգչային շարուածը
«Ազգ» թերթի
Նյութերը չեն գրախոսվում ու չեն վերադարձվում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ՀԱՅԱՍՏԱՆ

ԸՆԹԱՑԻԿ

Նյու Յորքում լսվեց ռեկինյան գործողությունների ծրագրի հաշվետվությունը

Իրականացման առումով Հայաստանը զիջում է նույնիսկ հարևան հանրապետություններին

Հունիսի 5-9-ը Նյու Յորքում կայացավ ՄԱԿ-ի գլխավոր գագաթաժողովի «Կանայք 2000. գենդերային հավասարություն, զարգացում եւ խաղաղություն 21-րդ դարում» հասուկ նիստը, որտեղ ամփոփվում էր կանանց դրության բարելավման նայրոբյան հեռանկարային ռազմավարության եւ ռեկինյան գործողությունների ծրագրի իրականացմանն ուղղված գործընթացների հաշվետվությունը: Գագաթաժողովին մասնակցել են ռեկինյան գործողությունների ծրագիրն ընդունած 84 երկրների 322 կազմակերպություններ, որոնց ներկայացուցիչները երկրի պաշտոնական տեսակետն են արտահայտել հինգ տարիների ընթացքում ծրագրի իրականացման ուղղությամբ:

Նյույորքյան գագաթաժողովում Հայաստանի ներկայացվածությունն իր աղքատիկ եւ ոչ այնքան իրազեկ կազմով նկատելի զիջում էր Պեկինի համաժողովի պատվիրակության կազմին, ուր հստակորեն տարանջատված էր կառավարական եւ ոչ կառավարական կազմը եւ նրանցից ամեն մեկն ուներ իր տեսակետը: Այս հանգամանքը դարձյալ լրացուցիչ հիմնավորում է, որ կանանց իրավահավասարության առումով ռեկինյան գործողությունների ծրագրին Հայաստանում այնքան էլ լրջորեն չեն վերաբերվել եւ ոչ թե առաջընթաց, այլ նահանջ է արձանագրվել: Նկատելի է նաեւ, որ փոխված է գագաթաժողովին մասնակցած ՀԿ-ների կազմը, եւ մասնակիցները համեմատաբար նորաստեղծ կազմակերպություններն են: Նրանցից միայն «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան» է գագաթաժողովին մասնակցելու հավատարմագիր ստացել, չնայած ասոցիացիայի նախագահ Զեմմա Հասրաթյանը նշեց, որ այդ հնարավորությունից շատերը կարող էին օգտվել: Հունիսի 20-ին «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի» ԱՕԿԱ-ում հրավիրած կլոր սեղանի մասնակիցներն ոչ այնքան հակված էին օրվա թեման քննարկելու՝ «Կինը խաղաղության մեջ, խաղաղությունը կանանց համար», որքան ծանոթանալու նյույորքյան գագաթաժողովի անցուդարձին:

Տկն Հասրաթյանը մասնակիցներին իրազեկեց, որ գագաթաժողովում զուգահեռաբար ընթանում էր երկու գործընթաց՝ գլխավոր ասամբլեայի հատուկ նստաշրջանը, որտեղ լսվում էին պետական զեկույցները եւ ՀԿ-ների ֆորումը, որը զուգահեռաբար քննարկում էր այդ բնագավառում կատարված աշխատանքները կառավարությունների եւ ՀԿ-ների կողմից: Տկն Հասրաթյանը հայտնեց, որ աշխարհի բոլոր երկրներում դրական զգալի առաջընթաց է նկատվում: Աֆրիկյան երկրներում մեծ թվով կանայք ներգրավված են պետական մարմիններում եւ ներգործություն ունեն պետական որոշումների վրա: Եվրոպական (սկանդինավյան երկրների) զեկույցները ցույց են տվել, որ գենդերային հավասարության խնդիրներն արդեն լուծված են բոլոր մակարդակներում: Որոշակի դրական միտումներ են նկատվել նաեւ ասիական երկրներում, որտեղ կանայք շատ շուտ կարողանում են ընդգրկվել պետական կառույցներում եւ ազդել իրենց երկրների արտաքին ու ներքին քաղաքականության վրա:

Զեմմա Հասրաթյանը քիչ ավելի բարդ էր համարում իրավիճակը ԱՊՀ երկրներում, որտեղ քվոտաների ժամանակը վաղուց անցել է, սակայն նոր մեխանիզմներ չեն գտնվել: Հայաստանում բազմաթիվ հարցեր դեռեւս անլուծելի են մնում, անգամ այդ երկրների հետ համեմատությամբ, եւ դրանք միայն ֆինանսական դժվարությունների հետ չեն կապված: «Ես նկատի ունեմ, որ Հայաստանը ստորագրել է ռեկինյան գործողությունների ծրագիրը եւ պարտավորվել է ստեղծել ազգային կառույց, որը կմշակեր կանանց դրության բարելավման եւ պետական քաղաքականության իրականացման ողջ մեխանիզմը, եւ այդ կառույցը պետք է կարողանար կարգավորել անցումային շրջանում կանանց հետ կապված բոլոր հարցերը»: Ասոցիացիայի նախագահը շեշտեց, որ կառույցը մինչեւ հիմա ստեղծված չէ եւ չնայած պետականորեն երկու որոշումներ են ընդունվել կանանց դրության բարելավման եւ առաջընթացի ապահովման ուղղությամբ, սակայն դրանք մնացել են թղթի վրա: Այդ առումով Հայաստանը զիջում է անգամ հարեւան Վրաստանին ու Ադրբեջանին, որտեղ ռեկինյան գործողությունների ծրագրին ընդառաջելով ստեղծվել են ազգային կառույցներ եւ զգալի առաջընթացներ են արձանագրվել:

Հայաստանի պաշտոնական տեսակետը նյույորքյան գագաթաժողովում ներկայացրել է ՄԱԿ-ում Հայաստանի ներկայացուցիչ Մովսես Աբելյանը, որը զեկուցելիս, տկն Հասրաթյանի ասելով, հավի է առել իր դիտողությունները, որոնք հետեւյալն են. ազգային մեխանիզմի բացակայություն, գենդերային կրթության ներմուծման բացակայություն ռեսուրսային եւ մասնավոր բուհերում, ռեսուրսային կառավարման մարմիններում կանանց ցածր ներգրավվածություն: Մեր հարցին՝ Հայաստանի պաշտոնական զեկույցը ճշմարի՞տ է արտացոլում կանանց վիճակը մեր երկրում, տկն Հասրաթյանը առաջարկեց անձամբ ծանոթանալ ելույթի տեքստին, բայց եւ այնպես ավելացրեց, որ նշված երեք հարցերում զեկույցը ոչ դրական միտումներ էր պարունակում:

ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՍՈՒԼԻՍ

Իտալացիները դժգոհում են ջրի համար երեւանցիների չվճարումներից

«Մեր ընկերությունը ֆինանսական շատ վատ վիճակում է, հատկապես, երբ բնակչությունն էլ հիմնականում չի վճարում օգտագործված ջրի վարձավճարը», երեկ հրավիրած մամլո ասուլիսում ասացին «էյ Յուիթիլիթի» իտալական ընկերության ներկայացուցիչները: Ընկերությունը 2000 թ.-ի հուլիսի 6-ից չորսամյա ժամկետով ստանձնել է Երեւանի «Ջրմուղ-կոյուղի» ընկերության գործունեությունը: Նրանք տեղեկացրին, որ Երեւանի բնակչության ընդամենը 16 տոկոսն է վճարում, ինչը խիստ խոչընդոտում է համակարգում նախատեսված բարելավման աշխատանքները: «էյ Յուիթիլիթի» ներկայացուցիչները վստահեցնում էին, որ մատակարարված ջրի դիմաց վճարումներ կատարելու դեպքում ջրամատակարարումը զգալիորեն կբարելավվի: Հակառակ դեպքում ընկերությունը չի կարողանալու ապահովել ջրամատակարարումը եւ ընդհանրապես գոյություն ունենալ: Ընդհանուր առմամբ, չորս տարիների բարելավման աշխատանքները նրանց հետ կնքված կառավարման պայմանագրով նախատեսվում է իրականացնել նաեւ համաշխարհային բանկի ընթացիկ ներդրումների հիմնադրամի միջոցով: Հիմնադրամի տրամադրած միջոցները պիտի օգտագործվեն ջրամատակարարման որակի բարելավման, ջրային ընկերության աշխատակազմին արդյունավետ շահագործման ընթացակարգն ուսումնասիրելու համար: Իտալական ընկերության ներկայացուցիչները խնդրեցին, որ այնուամենայնիվ Երեւանի ջրային համակարգի բարելավումը երկար ժամանակ կպահանջի՝ հիշելով հայտնի արտահայտությունը, թե Հռոմը մեկ օրում չի կառուցվել:

Ասուլիսին ներկա համայնքային զարգացման ծրագրերի կառավարման գործակալության տնօրեն Վարազդատ Ավետիսյանը նշեց, որ համակարգի կատարյալ բարենորոգման համար անհրաժեշտ է 400-500 մլն դոլար: Այնուամենայնիվ, իտալացիները խոստացան բնակչության հետ փոխըմբռնման եւ փոխադարձ ավորեցման պայմանների դեպքում Երեւանի բնակչությանն ապահովել եթե ոչ շուրջօրյա, ապա գեթ 18 ժամ ջրով, ինչպես նաեւ ջրի կորուստները կրճատել 80 տոկոսով: Ըստ նրանց, ջրի կորուստները Երեւանում մեծ տոկոս են կազմում: «էյ Յուիթիլիթի» ընկերությունը պատրաստվում է նաեւ օգտագործված ջրի դիմաց վարձավճարների հավաքագրումը հասցնել 95 տոկոսի:

Լ. Գ.



«Լոռու մարզ» թերթը դուրս եկավ տնակներից

Թերթի խմբագրությունը երկրաշարժից հետո շուրջ 12 տարի գործում էր Վանաձորի Հայի հրապարակի մերձակա տնակներում, որոնք արդեն վաղուց անօգտագործելի էին դարձել: Ավելորդ է նկարագրել, թե անցած տարիների ընթացքում ինչ դժվարություններ են կրել լրագրողները՝ աշխատելով «քարանձավային» պայմաններում: Օրերս խմբագրությունը տեղափոխվեց մարզպետարանի չորրորդ հարկ (ժամանակին այդ հարկում էր գործում նաեւ քաղաքային «Կայծ» թերթի խմբագրությունը): Շնորհիվ մարզպետ Հենրիկ Քոչինյանի բարյացակամության, մարզի միակ լրատվական թերթը, որը լույս է տեսնում շաբաթը երկու անգամ, վերջապես գործում է շենքային նորմալ պայմաններում:

Մեկ հաճելի լուր եւս. գրեթե միաժամանակ մարզպետարանում առանձին աշխատասենյակ է հատկացվել նաեւ «Հայաստանի Հանրապետություն» թերթի սեփական թղթակից Գագիկ Անտոնյանին:

ՄԱՆՎԵԼ ՄԻՔՈՅԱՆ

Ընտանիքի պլանավորման ազգային ծրագիր

1997 թ. ՀՀ կառավարության կողմից հաստատված «Ընտանիքի պլանավորման եւ սեռական առողջության համալսարանական» կենտրոնը ԱՄՆ-ի Ջոն Հոպկինս համալսարանի բնակչության հետ հաղորդակցման ծրագրերի կենտրոնի եւ ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ մեր հանրապետությունում իրականացնում է ընտանիքի պլանավորման ազգային ծրագիր: 1997 թ. ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի եւ Առողջության համաշխարհային կազմակերպության օժանդակությամբ բուժհիմնարկների կանանց կոնսուլտացիաներին կից գործում են ընտանիքի պլանավորման պետական կաբինետներ: Ի՞նչ նպատակներ են հետապնդում, ինչի՞ են ծառայում եւ որոնք են նրանց դերն ու նշանակությունը Հայաստանի ազգաբնակչության համար: Այս եւ նման հարցերն էին առողջապահության նախարարությունում կազմակերպված քննարկման նյութը:

«Կլոր սեղանին» մասնակցում էին ՀՀ առողջապահության փոխնախարար Ա. Զեյնալյանը, Պերինատոլոգիայի, մանկաբարձության եւ գինեկոլոգիայի կենտրոնի տնօրեն Ռ. Աբրահամյանը, ՀՀ ԱՆ մոր եւ մանկան առողջության պահպանման վարչության պետ Կ. Սարիբեկյանը, ՄԱԿ-ի ժողովրդագրության ֆոնդի Հայաստանի գրասենյակի ներկայացուցիչ Կ. Դաղարյանը, «Հանուն ընտանիքի եւ առողջության» ընտանիքի պլանավորման հայկական ասոցիացիայի նախագահ Մ. Խաչիկյանը:

Ընտանիքի պլանավորման պետական կաբինետները գործում են հանրապետության բոլոր շրջաններում, որոնցից 22-ը՝ Երեւանում: Կաբինետների բժիշկներն ու բուժքույրերը վերապատրաստվել են միջազգային փորձագետների օգնությամբ՝ ընտանիքի պլանավորման խորհրդատվության եւ հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդների բնագավառում:

Հայաստանի գլխավոր մանկաբարձ-գինեկոլոգ Ռազմիկ Աբրահամյանը նշեց, որ ծրագիրն ունի մի քանի բաղադրամասեր՝ նախ ընտանիքի պլանավորում (երբ ընտանիքն ինքն է որոշում երեխաներ ունենալու ժամանակը եւ քանակը) եւ Հայաստանում զգալիորեն աճած նախաղեղային եւ քաղցկեղային երեւույթների հետազոտություն-ուսումնասիրություններ: Ծրագիրը զբաղվում է կանանց ծնելիության պրոբլեմներով: 1995 թ. տվյալներով՝ մեր հանրապետությունում մեծ էր մայրական մահացությունը եւ բավականին շատ՝ հղիության արհեստական ընդհատումները (ըստ վիճակագրության 1 ծննդաբերություն, 2 արհեստական ընդհատում): 94-95 թթ. յուրաքանչյուր 100 ընտանիքից 25-ը տառապում էր անպտղությամբ: Պատշաճ վիճակում չէր հղիության վերահսկողությունը, պայմաններն անբարենպաստ էին: Ոչ ցանկալի հղիություններից պաշտպանվելու հին եղանակները հանգեցնում էին վտանգավոր հետեւանքների՝ արհեստական վիժումների. աճել էր սեռական վարակիչ հիվանդություններ ունեցողների թիվը: Եվ ահա 1997 թ.-ից կանանց կոնսուլտացիաներին կից ընտանիքի պլանավորման կաբինետները օգտակար աշխատանք կատարեցին այս ուղղությամբ: ՄԱԿ-ի ծրագրի օժանդակությամբ Հայաստան առաքվեցին հակաբեղմնավորիչներ (ծրագրում նախատեսված չէր), որոնք անվճար են տրամադրվում: Կանայք, դիմելով այս ծառայությանը, բժշկի նշանակմամբ եւ իրենց ցանկությամբ կարող են ընտրել հակաբեղմնավորման ժամանակակից միջոցներ: Ծրագրի գործածությունից սկսած մայրական մահացությունը զգալիորեն նվազել է: Մեր հանրապետությունում տատանվում է մինչեւ 25-26 տոկոս, երբ Վրաստանում հասնում է 60 տոկոսի, Թուրքիայում՝ 80, Ռուսաստանում՝ 70:

Հանրապետության գլխավոր մանկաբարձ-գինեկոլոգը նշեց առողջության վրա հղիության արհեստական ընդհատումների վնասը, որը հատկապես ազդում է կանանց պտղաբերության վրա: Գաղտնիք չէ, որ այսօր հանրապետությունում շատ են տարածված վեներական հիվանդությունները, ավելանում է ընկեցիկ երեխաների թիվը, արձանագրված են օրական «գործող» 700 մարմնավաճառներ, երկրի սոցիալական վիճակը (հազարավոր անապահով ընտանիքներ), ազգաբնակչության, հատկապես երիտասարդության մենթալիտետի փոփոխությունները հաստատել են նրան, որ նորաստեղծ ընտանիքները ցանկանում են ունենալ ընդամենը 1-2 երեխա: Ծրագրի նպատակներից մեկը հղիության արհեստական ընդհատումը հակաբեղմնավորման ժամանակակից անվճար միջոցներով փոխարինելն է: Շնորհիվ այս ծրագրի փոխվել է ծնունդ-աբորտ հարաբերակցությունը: Ծնելիությունը կրկնակի բարձրացել է:

Ըստ ՄԱԿ-ի ժողովրդագրության ֆոնդի Հայաստանի գրասենյակի ներկայացուցիչ Կ. Դաղարյանի, սա հանրապետությունում իրագործվող առաջին ծրագիրն է, որի համար կանխիկ գումար երկիր չի մտել: ՄԱԿ-ի կողմից հակաբեղմնավորիչները Հայաստան առաքվել են 1997 թ.-ից մինչեւ 1999 թ. դեկտեմբերի 31-ը: Կանխիկ գումար տրվել է միայն տասնօրյա սեմինար ուսուցումներ անցկացնելու համար: Ստուգումները ցույց են տվել, որ հակաբեղմնավորիչները ազգաբնակչությանը տրվել են հիմնականում անվճար:

Բնակչությունն այս առումով տեղեկացված չէ, եւ ծրագրի նպատակն է տանել լայն քարոզարշավ եւ բրոշյուրների, պլակատների միջոցով մարդկանց բեղմնավորման ժամանակակից մեթոդների մասին տեղեկություններ տալ:

ՄԵԼՈՆԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ԱԶԳ

ԱԿՅՈՒՏ

Համախմբումը կենսական անհրաժեշտություն է

Ռուսաստանի հայերը կարող են նպաստել ռուս-հայկական միջպետական հարաբերությունների ամրապնդմանը, վստահեցնում է Արա Աբրահամյանը

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, հունիսի 16-ին Մոսկվայի «Թրեզիդենտ հոթելի» դահլիճում բացված հիմնադիր համագումարում ստեղծվեց «Ռուսաստանի հայերի միություն» հասարակական կազմակերպությունը, որի նախագահ ընտրվեց հզոր ձեռնարկատեր, «Համաձայնություն» ՓԲԸ նախագահ Արա Աբրահամյանը: Համագումարի բացումից առաջ նա պատասխանեց «Նեզավիսիմայա գազետայի» թղթակցի հարցերին:

– Ո՞վ նախաձեռնեց համագումարը, ինչպիսի՞ն է կազմկոմիտեի անհատական կազմը:

– Նախաձեռնող խմբի մեջ էին հայտնի քաղաքական ու հասարակական գործիչներ, գիտնականներ, գործարարներ, մշակույթի գործիչներ: Մասնավորապես մեր կազմկոմիտեի անդամներ են ՌԴ Պետդումայի փոխխոսնակ Արթուր Չիլինգարովը, քաղաքագետ Անդրանիկ Միհրանյանը, ակադեմիկոսներ Սամվել Գրիգորյանը եւ Հենրի Աղայանը, Տիրան արքեպիսկոպոսը եւ սփյուռքի այլ նշանավոր ներկայացուցիչներ: Իհարկե, հայ համայնքի ակտիվը չի սահմանափակվում կազմկոմիտեի շրջանակներով: Համայնքի կյանքին անմիջականորեն մասնակցում են սիրված դերասան Արմեն Ջիգարխանյանը, հիանալի նկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանը, ակադեմիկոսներ Սիսակյանը, Աղանբեգյանը, հայտնի բժիշկներ, երաժիշտներ, Ռուսաստանի գիտության ու մշակույթի նշանավոր գործիչներ:

– Որո՞նք են համագումարի կազմակերպական սկզբունքները: Ի՞նչ եք կարծում, շրջանային կազմակերպությունները կպաշտպանե՞ն ձեր նախաձեռնությունը:

– Հաշվի առնելով անցյալի փորձը եւ համառուսաստանյան կազմակերպության ստեղծման ծախողումները, մենք որոշեցինք այս անգամ հրաժարվել միավորման ուղղահայաց սկզբունքից: Անցյալում ինչպե՞ս էին ստեղծվում նման կազմակերպությունները: Նախ ստեղծվում էր մոսկովյան ազգային խումբը, իրեն հայտարարելով համառուսաստանյան միություն կամ ընկերակցություն, ապա ջանում էին այդ կառույցի մեջ միավորել շրջանային համայնքներին: Մենք ընտրեցինք ուրիշ սկզբունք: Կես տարուց ավելի կազմակերպական աշխատանք էր կատարվում համառուսաստանյան համագումարի գումարման նպատակով, որն իրոք կներկայացներ Ռուսաստանի հայ համայնքները:

Կազմկոմիտեի ներկայացուցիչները մի շարք ուղեւորություններ կատարեցին այն շրջաններում, որտեղ կան բազմանդամ, կազմակերպված եւ արդյունավետ գործող հայ համայնքներ: Մասնավորապես, համագումարի նախօրեին Արթուր Չիլինգարովը մեկնեց Աստրախան եւ հանդիպեց Ռուսաստանի հարավի հայ համայնքների ներկայացուցիչների հետ: Ի դեպ, Աստրախանի հայ համայնքը Ռուսաստանում հնագույններից մեկն է. ձեւավորվել է 17-րդ դարի վերջերին: Կազմկոմիտեի մի խումբ ներկայացուցիչներ վերջերս եղան Սանկտ Պետերբուրգում: Այդ քաղաքում հայերի ինքնակազմակերպման ավանդույթները դեռ նախահեղափոխական շրջանից են: Հիանալի կազմակերպված հայ համայնքը համախմբվել է Պետերբուրգի հայկական եկեղեցու հոգեւոր հովվի շուրջը: Այնտեղ գործում են ազգային դպրոց, մշակութային եւ լուսավորչական կենտրոններ, վերականգնված է Նեւսկի պողոտայի գեղեցիկ հայկական եկեղեցին, ամենամոտ ժամանակներս սպասվում է դրա բացումը: Առանձնապես հաճելի տպավորություն գործեց այն փաստը, որ Բարեկամության տանը կայացած հանդիպման ժամանակ հայ համայնքի ներկայացուցիչները շատ ջերմորեն, երախտագիտությամբ խոսեցին քաղաքային իշխանությունների օժանդակության մասին: Մեզ թվում է, որ դա համայնքի եւ իշխանությունների արդյունավետ փոխգործակցության ամենահաջող օրինակներից մեկն է:

Այս շաբաթ կազմկոմիտեի մի խումբ անդամների հետ այցելեցինք Դոնի Ռոստով եւ հանդիպում ունեցանք առավել կազմակերպված ու ակտիվ համայնքներից մեկի ներկայացուցիչների հետ: Հայերն արդեն մի քանի հարյուրամյակ ապրում են Նոր Նախիջեւանում: Դեռ 18-րդ դարի երկրորդ կեսին Սուվորովը Եկատերինա II-ի հրամանով ղրիմահայերին դուրս բերեց Ղրիմի խանության տնտեսական զորությունը թուլացնելու նպատակով. հայերն ու հույները Ղրիմում գլխավոր հարկատուներն էին: Դոնի ափերին ղրիմահայերը հիմնեցին Նոր Նախիջեւանն ու Չալթը, որոնք ներկայումս Ռոստովի մարզի բարգավաճ շրջաններից են:

Ռոստովից մենք մեկնեցինք Կրասնոդարի երկրամաս: Տարբեր գնահատումների համաձայն, այնտեղ ապրում են 600-800 հազար հայեր, որոնք երկրամասում թվակազմով երկրորդ էթնիկական խումբն են: Այն բանից, թե նրանք որքանով կմերվեն Կուբանի հասարակական-քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կյանքին, կախված են այդ տարածաշրջանի խաղաղությունն ու կայունությունը: Մենք գիտենք, որ որոշակի բարդություններ կան Կրասնոդարի երկրամասի ղեկավարության եւ հայ համայնքի հարաբերություններում: Արդեն Մոսկվա են հասնում կշտամբանքներ ու բողոքներ նահանգապետ Նիկոլայ Կոնդրատենկոյի եւ երկրամասային վարչակազմի հասցեին: Երկրամասի հայ համայնքների ներկայացուցիչների հետ կայացած հանդիպումները հաստատեցին հայ համայնքի եւ տեղական իշխանությունների հարաբերություններում լուրջ լարվածության առկայությունը: Երկրամասային իշխանությունների ներկայացուցիչների հետ տեղի ունեցած հանդիպման ընթացքում քննարկվեցին որոշ հայ համայնքների եւ կազակների միջեւ օտարացման, բընամանքի հաղթահարման ուղիները: Կարծում եմ, որ այդ ուղեւորությունները շատ օգտակար են:

– Որո՞նք են կազմակերպության ծրագրային գործունեության գլխավոր ուղղությունները, ինչո՞վ է զբաղվելու առաջին հերթին:

– Ամենագլխավոր խնդիրն արդյունավետ կազմակերպական կառույցների ստեղծումն է: Այս կամ այն խնդրի շուրջը հայ համայնքների համախմբման ենթակառույցը պետք է այլի ընկնի արդյունավետությամբ: Իհարկե, դա կպահանջի որոշակի ֆինանսական ծախսեր: Շատ կարեւոր է, որ համայնքների ղեկավարները ձեռքերը չլվարզեն՝ պետությունից կամ գործարարներից դրամ խնդրելով կազմակերպական միջոցառումների համար: Ենթադրվում է ստեղծել ձեռնարկչական գործունեության այնպիսի ծեւ, որն ինքնին կկարողանար «սնել» անհրաժեշտ կազմակերպական կառույցը: Հակառակ դեպքում դժվար է պատկերացնել համահայկական կազմակերպության ապագան:

Անշուշտ, անկյունաքար կդառնա բոլոր ազգային համայնքների համար ավանդական դարձած ազգային ինքնակազմակերպման, մշակույթի, լեզվի դաշտ հայ համայնքի քաղաքական լուսավորման մեջ, որպեսզի հայերը առավել իմաստավորված եւ գիտակցված ընտրություն կատարեն թեկնածուների կամ ընտրական դաշինքների պատասխանության հարցում: Լավ կլիներ արձանագրել քաղաքական ուժերի եւ համայնքների փոխադարձ պարտավորությունները, ինչպես դա արվում է բազմաթիվ զարգացած երկրներում. քաղաքական ուժերը որոշակի պարտավորություններ են ստանձնում ընտրողների քվեների դիմաց: Իհարկե, դա բարդ եւ տեւական գործընթաց է, բայց եթե մենք թեւակոխել ենք ժողովրդավարական ինքնակազմակերպման ուղին, ապա անհրաժեշտ է յուրացնել նաեւ այդ փորձը:

– Համահայկական միությունն ինչպիսի՞ դեր կարող է խաղալ Ռուսաստանում ազգամիջյան հարաբերությունների կայունացման ոլորտում:

– Գործունեության անսպառ ասպարեզ կա Ռուսաստանի տարբեր ազգերը, ժողովուրդները, համայնքները ներկայացնող կազմակերպությունների հարաբերությունների բարելավման համար: Կարծում եմ, որ անհրաժեշտ են Ռուսաստանի համայնքների ղեկավարների անմիջական, հորիզոնական կապեր, որոնց հիման վրա հետագայում կարելի է ստեղծել առավել արդյունավետ ազգամիջյան կազմակերպություն՝ հավանաբար, ազգային համայնքների համակարգիչ խորհուրդ: Մեր կազմակերպության գործունեության գլխավոր ուղղություններից մեկը կլինի մյուս ազգային կազմակերպությունների հետ կապերի հաստատումն ու խորացումը՝ ի շահ ազգամիջյան հաշտության ու համաձայնության, Ռուսաստանի միասնական մշակութային տարածին մեր բազմաթիվ էթնիկական խմբերի արդյունավետ մասնակցության:

– Միությունը, առհասարակ Ռուսաստանի հայ համայնքն ինչպիսի՞ դեր կարող են խաղալ ռուս-հայկական հարաբերությունների զարգացման մեջ:

– Մենք գտնում ենք, որ աշխարհում սփռված բազմաթիվ հայ համայնքների մեջ Ռուսաստանինը «գլխավոր համայնքն» է: Նա ամենագլխավորն է շատ առումներով՝ թվակազմով, մտավոր ներուժով, Ռուսաստանի պես վիթխարի եւ ազդեցիկ պետության շրջանակներում իր դերով ու կարեւորությամբ, իր տնտեսական ներուժով: Թեեւ ամերիկահայերի մեջ կան բազմաթիվ հարուստներ եւ նույնիսկ միլիարդատերեր, բայց ընդհանուր առմամբ 2 միլիոնից ավելի ռուսահայերը շատ ավելի մեծ օգնություն են ցույց տալիս Հայաստանին, քան մյուս երկրների հայ համայնքների ներկայացուցիչները: Չնայած ասում են, թե Ռուսաստանի Դաշնությունն անմիջական տնտեսական օգնություն չի հատկացնում Հայաստանին, իսկ ԱՄՆ-ն ամեն տարի Հայաստանին 100 մլն դոլար է տրամադրում, եթե հաշվի առնենք Ռուսաստանի հայերից ստացվող ընդհանուր օգնությունը, ապա այդ թվերը կարող են լիովին համադրելի լինել:

Կարծում եմ, որ Հայաստանում Ռուսաստանի ազդեցության ամրապնդման մեջ նշանակալի դեր պետք է խաղա ՌԴ հայ համայնքը՝ ոչ միայն Հայաստանում ապրող ազգականներին դրամական օգնություն ցույց տալով, այլեւ արտադրական ոլորտում միջոցներ ներդնելով եւ Հայաստանի տնտեսությունը ՌԴ տնտեսությանն առավել սերտորեն շաղկապելով:

Ռուսաստանում հայրենիք գտած բազմանդամ հայ համայնքը ռուս-հայկական հարաբերությունները համարում է ռազմավարական համագործակցության հարաբերություններ, որոնք ունեն ընդհանուր արեւելաքրիստոնեական արմատներ եւ համընկնում են աշխարհաքաղաքական, քաղաքական ու ռազմական հարցերում: Կարծում եմ, որ Ռուսաստանի հայերը դեռ շատ բան կարող են անել եւ կանեն ռուս-հայկական գործընկերության ամրապնդման համար:

ԱԶԳ

Միջազգային

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

Կոֆի Անանն ընդունում է իր սխալը

Լիբանանի նախագահ Լահուդի եւ վարչապետ Հոսի հետ հունիսի 19-ին հանդիպելուց հետո ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանը խոստովանեց, որ դեռեւս առկա են լիբանանյան հողերի բռնակցումներ Իսրայելի կողմից: Նրա խոսքերով «գոյություն ունեն որոշ բռնակցումներ, եւ իսրայելցիները պետք է հեռանան», շեշտելով, որ ՄԱԿ-ի փորձագետների օրերս կատարած սահմանագծումը վերջնական չէ:

Այնուհանդերձ, Կոֆի Անանի այցը Բեյրութ, ըստ էության, ավելի խորացրեց տարաձայնությունը ՄԱԿ-ի եւ Բեյրութի միջեւ՝ Անվտանգության խորհրդի թիվ 425 բանաձեւն իրագործելու առնչությամբ: Բանն այն է, որ վերոնշյալ հանդիպումից հետո հրապարակվեց լիբանանյան պաշտոնական հայտարարությունը, ուր ընդգծվել է, թե Լիբանանը չի համաձայնելու ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերի վերաբաշխմանը հարավում, քանի դեռ չեն վերացել Իսրայելի սահմանախախտումները:

Հիշեցնենք, որ միջինարեւելյան ներկայիս շրջագայության նախօրեին Անանը հայտնել էր, իբր Իսրայելը հեռացել է Լիբանանից՝ ՄԱԿ-ի թիվ 425 բանաձեւի համաձայն: Այս պնդումը վավերացվել էր Անվտանգության խորհրդի որոշ վերապահումներով, որոնք կատարվել էին հօգուտ Լիբանանի՝ Ռուսաստանի միջամտության շնորհիվ: Այդ վերապահումները վերաբերում էին իսրայելական սահմանախախտումներին: Ի դեպ, լիբանանյան նշյալ հայտարարությունը նկատել է տվել, որ ԱԽ-ի եզրակացությունը հակասական է՝ պահանջելով սահմանախախտումների վերացումը նախքան ՄԱԿ-ի ուժերի վերաբաշխումը երկրի հարավում:

Ա. Մ.

ԻՐԱՆԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ

Կասպյան նավթի գործոնը եւ Ռուսաստանի կովկասյան քաղաքականությունը

«ԼՂ ժողովուրդը հիասթափված է, քանզի իր ճակատագիրը կապում են նավթի հետ»

«Կենտրոնական Ասիայի եւ Կովկասի հետազոտություններ» հանդեսի խմբագիր Կասեմ Մալեմիի վերլուծական հոդվածը, որ ներկայացնում ենք թարգմանաբար, չի կարելի համարել պաշտոնական Թեհրանի տեսակետը, սակայն, միեւնույն ժամանակ, իրանական մամուլի օրգանը չի կարող չարտահայտել Թեհրանի տեսակետները, անուղղակի, որոշակի վերապահումներով:

Վերջին մի քանի տարիներին Ռուսաստանի տնտեսական ազդեցությունը Հարավային Կովկասի երկրներում իջել է նվազագույն մակարդակի, այն դեպքում, երբ Ադրբեջանի նավթի պաշարները (մոտավոր հաշվարկներով 4 միլրդ տոննա, որից 80 տոկոսը՝ Կասպիցում) տարածաշրջանի ճակատագրի համար դառնում են վճռորոշ գործոն: Սակայն դիտորդները կարծում են, թե Կասպիցի նավթը մոտ ապագայում չի կարող մեծ եկամուտներ բերել Ադրբեջանին, քանզի նավթի գործոնը տարբեր ուժերի կողմից հաճախ շահարկվում է, եւ էներգակիրները միջազգային շուկա հանելու հարցում այդ ուժերի շահերը հաճախ հակասում են միմյանց, հատկապես խողովակաշարերի ընտրության խնդրում: Հավանաբար հենց այս հանգամանքն են հաշվի առնելով ադրբեջանցի որոշ տնտեսագետներ եւ քաղաքագետներ պնդում, որ քաղաքական տեսանկյունից նավթը կարեւոր գործոն է, սակայն մոտ ապագայում չի կարող բուժել Ադրբեջանի տնտեսությունը:

Թուրք-ադրբեջանական լոբբին ամեն կերպ փորձում է ԱՄՆ-ի աչքին Ադրբեջանի աշխարհաքաղաքական դիրքը կարեւորել: Վաշինգտոնը քայլ առ քայլ զարգացնելով տնտեսական, քաղաքական, մշակութային կապերը Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի հետ՝ փորձում է Ռուսաստանին դուրս մղել այս տարածաշրջանից: Հայաստանում եւ Ղարաբաղում գիտակցում են, որ բանակցություններով հնարավոր է հասնել խաղաղության, մինչդեռ Ադրբեջանը նախընտրում է այլ մեթոդներ: Բաքվի պաշտոնյաները կարծում են, որ նավթը կարող է դառնալ տնտեսական այն լծակը, որի օգնությամբ հնարավոր կլինի ԼՂ հարցը վճռել իրենց օգտին:

Ռուսաստանի ազդեցությունը տարածաշրջանում դարերի պատմություն ունի, սակայն օտար ուժերը փորձում են Մոսկվային դուրս մղել Կովկասից: Ռուսաստանն ունի մի շարք լծակներ, այդ թվում հենց Բաքվի կողմից շահարկվող նավթի գործոնը՝ ճնշելու Ադրբեջանին: Բաքվի վերաբերմունքը Մոսկվային բերեց նրան, որ Ռուսաստանը 90-ական թթ. ռազմական օգնություն տրամադրեց Հայաստանին, ինչի շնորհիվ հայերը կարողացան գրավել Ադրբեջանի տարածքի շուրջ 20 տոկոսը:

Հենց Ղարաբաղի ճգնաժամն է հնարավորություն տալիս ԱՄՆ-ին ուժեղացնելու իր դիրքերը ողջ Հարավային Կովկասում: Թվում է՝ Վաշինգտոնի ջանքերը վստահության մթնոլորտ են ձեւավորել, թվում է՝ հակամարտության լուծումը կասկած չի հարուցում, սակայն դրանք այնքան էլ իրական չեն, որովհետեւ ա) Մոսկվան թույլ չի տա իր ազդեցության ոլորտում այլ ուժերի ներկայություն (Արեւմուտքը կարծես թե միտված չէ տարածաշրջան ուղարկելու զինված ուժեր՝ խաղաղությունը պահպանելու նպատակով. Արեւմուտքը հաշվի առնելով Ռուսաստանի զայրույթը, չի վտանգի իր գինվորի կյանքը), եւ հասկանալի է, թե ինչու է Մոսկվան երբեմն ադրբեջանամետ կեցվածք ընդունում, բ) բանակցություններին, որոնք նպատակ ունեն տարածաշրջանում խաղաղություն եւ կայունություն հաստատել, չի մասնակցում Իրանը. ամենայն հավանականությամբ Թեհրանը դեմ կլինի ցանկացած համաձայնագրի, որն ուղղված կլինի Ադրբեջանի հզորացմանը եւ Ռուսաստանի թուլացմանը:

ԼՂ-ում հակամարտության քաղաքական լուծումն ու կասպյան նավթի խողովակաշարերի ուղիների ընտրության հարցն անխախտելիորեն կապված են միմյանց: Ղարաբաղի ժողովուրդը հիասթափված է, որ իր ճակատագիրը կապվում է նավթի հետ: Ղարաբաղցիները լավ են հասկանում, որ իրենց ինքնորոշման ճանապարհին ադրբեջանական նավթի սեւ գույնը կուրացնում է միջնորդների աչքերը, որ միջնորդները շեղվել են ԼՂ հիմնահարցից:

Մոսկվա-Երեւան ավանդական կապերը

Դարեր շարունակ Ռուսաստանի ամենահուսալի դաշնակիցը Հարավային Կովկասում եղել է եւ է Հայաստանը: 1990 թ., երբ իշխանության եկավ Տեր-Պետրոսյանը, Հայաստանի արտաքին քաղաքականությունն ընդունեց նոր երանգ, որը մեկ բառով կարելի է ձեւակերպել հավասարակշռված: Նա Ռուսաստանի հետ հաստատեց բարիդրացիական հարաբերություններ: Հետագայում Մոսկվա-Երեւան հարաբերությունների մերձեցման խթան հանդիսացավ Բաքվի թուրքամետ, արեւմտամետ քաղաքականությունը: Ռուսաստանը շարունակում է Հայաստանում պահել իր ռազմաբազաները, երկու երկրները համատեղ զորավարժություններ են անցկացնում Թուրքիայի սահմանում: Վերջին տարիներին Ռուսաստանը Հայաստանին 1 միլրդ դոլար ընդհանուր արժողությամբ զենք է տրամադրել:

Մոսկվա-Բաքու հարաբերությունները

Անկախություն ձեռք բերելուց ի վեր Ադրբեջանը զարգացնում է քաղաքական եւ տնտեսական հարաբերություններ Թուրքիայի, Արեւմուտքի հետ, փորձում անկախ լինել Մոսկվայից: 1997 թ. մայիսին պաշտոնական այցով Անկարայում գտնվող Ալիեւը 9 համաձայնագիր կնքեց Թուրքիայի հետ, այդ թվում համատեղ ռազմավարության, երկկողմ ռազմական փոխօգնության: Այսօր Թուրքիայի մի քանի հարյուր ռազմական մասնագետներ աջակցում են ադրբեջանական բանակի կազմավորմանը:

Ռուսաստանը վերջին շրջանում ջանում է նորմալ հարաբերություններ պահպանել Ադրբեջանի հետ: Մոսկվան Բաքվի վրա ճնշում գործադրելու համար ունի մի շարք լծակներ, այդ թվում ԼՂ հարցը: Թեեւ ԼՂ խնդրի կարգավորման գործում Ռուսաստանը միակ միջնորդը չէ, սակայն նրա ազդեցությունը շատ ավելի ծանրակշիռ է, քան ԵԱՀԿ Մինսկի խմբինը, ԱՄՆ-ինը կամ Թուրքիայինը:

Հաշվի առնելով, որ Բաքուն իր դռներն է բացել արեւմտյան ուժերի՝ ՆԱՏՕ-ի, ԱՄՆ-ի եւ Թուրքիայի առջեւ, չի բացառվում, որ ոչ հեռու ապագայում այս տարածաշրջանում կգերիշխեն Արեւմուտքի շահերը: Սակայն շատ բան կախված է Ռուսաստանից: Եթե Մոսկվան շարունակի իր կրավորական քաղաքականությունը Կովկասում, Արեւմուտքի ազդեցությունն Ադրբեջանում կդառնա իրականություն:

Պատրաստեց Ռ. Հ.

Միայն անցյալ տարի ծովահենները 300 նավերի վրա են հարձակվել

Վերջին երկու հարյուրամյակներին նավարկությունները բավական անվտանգ էին դարձել, քանզի ծովային ելուզակության դեպքերի թիվը նվազել էր: Բայց վերջին տարիներին ծովահենները վերաբխուժացել են գրեթե ամենուրեք՝ Կարիբյան ծովից մինչեւ Ֆիլիպիններ եւ Փղոսկրի ափից մինչեւ Մալակայի նեղուց: Ըստ որում, նրանք ավելի հանդուգն են դարձել եւ, երբեմնի ճանկիչներից ու թրերից բացի, զինված են նաեւ ինքնաձիգներով, նռնակներով եւ հրկիզառումբերով, ուստի մեծ վտանգ են ներկայացնում բեռնանավերի ու զբոսանավերի անձնակազմերի եւ ուղեւորների համար:

Հնդկական ծագումով բրիտանացի ֆննիչ Զայանթ Աբհիանքարը, որը հեռավոր նավարկության նախկին նավաստի է, լոնդոնյան իր աշխատասենյակից ուշի-ուշով հետեւում է դեպքերի ընթացքին: «Պուեն» հանդեսին նրա հայտնած տվյալներով, միայն անցյալ տարի ծովերում 300 հարձակում է ձեռնարկվել նավերի վրա: Ելուզակային այդ գործողությունների կեսը տեղի է ունեցել Ասիայի ջրատարածքում: Պաշտոնական տվյալներով, առագաստանավերի վրա կատարվել է ընդամենը 6 հարձակում: Բայց այդ թիվն ակնհայտորեն թերի է, քանզի զբոսանավերի ուղեւորները հազվադեպ են հայտնում հարձակումների մասին:

Լոնդոնում գործող Ծովագնացության միջազգային գրասենյակը տեղեկացնում է, որ միայն 1998 թ. Ֆիլիպիններին, Ինդոնեզիայի, Ադենի, Սոմալիի, Սինգապուրի, Բանգլադեշի եւ Հայիթիի ափամերձ ջրերում ելուզակներն սպանել են 78 մարդու՝ նավաստիների, զբոսանավորդների եւ նավաթեստերի: Անցյալ տարի ծովահենները Չինաստանի ջրատարածքում փոքր-ինչ սահմանափակեցին իրենց գործողություններն այն բանից հետո, երբ ՉԺՀ իշխանությունները որոշեցին հանցանքի մեջ բռնվածներին կախաղան բարձրացնել: Ռուս եւ իսրայելցի նավաստիներն իրենց հերթին սկսել են առանց վարանելու կրակ բացել ելուզակների վրա:

Վերջիններս այսօր բավական կազմակերպված են գործում: Ասիայում ծովահենները մտնում են չորս խոշոր հանցախմբերի մեջ, որոնք գործակալներ ունեն նավահանգիստներում (մասնավորապես Սինգապուրում), պարզում են, թե որ նավերն են մեկնում, եւ դրանց ընդառաջ ելուզակային նավակներ են ուղարկում: Որոշ նավեր անհետանում են բեռով հանդերձ: Այսպես, ընթացիկ տարվա փետրվարին անհետ կորան «Գլոբալ Մարս» եւ «Հոլիեն» նավերը, որոնց գոնե իրանները գտնելու համար խոստացված է համապատասխանաբար 100 հազար եւ 80 հազար դոլար:

Պ. Բ.

Թուրքիայում կենսամակարդակը չափազանց ցածր է Եվրամիությանն անդամակցելու համար

ՍԱԼՈՆԻԿ, 19 ՀՈՒՆԻՍ, ՍՆԱՐՔ: Թուրքիան զգալիորեն հետ է մնում ոչ միայն Եվրամիության երկրներից, այլեւ Կենտրոնական եւ Հարավ-արեւելյան Եվրոպայի գրեթե բոլոր երկրներից: Այդ մասին հայտարարել է Մակեդոնիայի լրատվական գործակալությունը՝ հիմնվելով Եվրահանձնաժողովի վիճակագրական գործակալության հանձնաժողովի (European Commission Statistics Agency, ECSA) տրամադրած տվյալների վրա: Թուրքիայում անցկացված հետազոտությունները երեւան են հանել տնտեսության, կրթության եւ առողջապահության զարգացման ցածր մակարդակը:

Համաձայն ECSA-ի կողմից անցկացված հետազոտությունների, Թուրքիայում 100,000 բնակիչների թվին բաժին են ընկնում 115 բժիշկներ, այն դեպքում, երբ փոքր Լիտվայում բժիշկների թիվը երեք անգամ ավելի է՝ 395, 100,000 բնակիչների թվին: Թուրքիայում բնակչության բարձր աճ է նկատվում՝ յուրաքանչյուր 1000-ին 15,1: Դրա հետ մեկտեղ նա գերազանցել է երեխաների մահացության բոլոր ռեկորդները՝ 37,9 1000 նորածինների թվին: Թուրքիայի միջին բնակչի գնողունակությունը կազմում է Եվրամիության քաղաքացու գնողունակության շուրջ 32 տոկոսը:

Հիմնվելով այդ թվերի վրա՝ ECSA-ն պնդում է, որ Եվրամիությանն անդամակցելու համար Թուրքիան պետք է առավելագույն ջանքեր գործադրի «բոլոր բնագավառներում չափազանց ցածր ցուցանիշներն» ուղղելու նպատակով:

ԱԶԳ

Մշակույթ

Շեմպիրյան օրեր Երևանում

Ակադեմիկոս, արվեստաբան Ռուբեն Զարյանի հիմնադրած Հայաստանի շեմպիրյան կենտրոնի եւ շեմպիրյան գրադարանի 35-ամյակին նվիրված երկօրյա գիտաժողովը տեղի ունեցավ անցած շաբաթ, Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում: Միջոցառման նախաձեռնողն էր Հայաստանի շեմպիրյան ընկերությունը՝ Զավեն Վարդանյանի նախագահությամբ:

Գիտաժողովի նախագահողը՝ Երեւանի պետական համալսարանի արաստահմանյան գրականության եւ գրականության տեսության ամբիոնի վարիչ, դոկտոր-պրոֆեսոր Հենրիկ Էդոյանն անդրադարձավ ինչպես համաշխարհային, այնպես էլ հայկական մշակույթների վրա Վիլյամ Շեմպիրի ստեղծագործությունների հսկայական, անգնահատելի ազդեցություններին:

Գիտաժողովին անգլիացի մեծ դրամատուրգի ստեղծագործությունների բազմաթեմային (շեմպիրյան բառի բազմաձայնություն, տեմպի երաժշտականություն, երկերի թատերայնության խնդիրներ, հայերեն թարգմանությունների համեմատություն եւ այլն) վերլուծություն-մեկնաբանություններով հանդես եկան պետհամալսարանի անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Սեդա Գասպարյանը, Արվեստի ինստիտուտի շեմպիրյան կենտրոնի գիտական խմբի ղեկավար Ռուզան Մարգունին, թատերագետ Վարսիկ Գրիգորյանը, կոնսերվատորիայի դասախոս Բյուրակն Անդրեասյանը, Բրյուսովի անվ. ինստիտուտի դասախոս Ստելլա Նոսալովան եւ ուրիշներ: Գիտաժողովին զեկուցում կարդաց Բրազիլիայի Սան Պաուլոյի համալսարանի դոկտոր-պրոֆեսոր, գրականագետ Կառլոս Դաղլյանը, ամփոփիչ խոսքով հանդես եկավ Քլայվ Սվիթինգը՝ Անգլիայից:

Կազմակերպության նախագահ Զավեն Վարդանյանը շնորհավորելով մասնակիցներին շեմպիրյան օրերի հաջող անցկացման առթիվ, նշեց, որ Վ. Շեմպիրի ստեղծագործությունների նկատմամբ հետաքրքրությունները երբեք եւ ոչ մի դարաշրջանում չեն նվազել եւ հույս հայտնեց, որ նորաստեղծ կազմակերպությունն ավելի կընդլայնի իր գործունեությունը՝ մշակելով նոր ծրագրեր եւ հասակ նպատակներ, կատարն ամրապնդելով պետհամալսարանի, Բրյուսովի, արվեստի ինստիտուտների համապատասխան մասնագետների եւ ընդհանրապես շեմպիրյան ստեղծագործությունն ուսումնասիրողների հետ:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ԱԲՈՎՅԱՆ

«Կյանքի փառատոն-2000»

Արդեն 9 տարի Հայաստանում գործում է «Քրիստոնեական մշակութային ծառայություններ» միջազգային կազմակերպությունը, որի նպատակն է հանրապետությունում վերականգնել մշակութային կյանքը, բացահայտել եւ զարգացնել երեխաների բնածին շնորհները: Այդ նպատակով կազմակերպության անդամները եղել են Հայաստանի գրեթե բոլոր քաղաքներում, Արցախում եւ Վրաստանում:

Մայիսի 14-ին վերոհիշյալ կազմակերպության եւ Աբովյանի քաղաքապետարանի ջանքերով քաղաքում անցկացվեց «Կյանքի փառատոն-2000» խորագիրը կրող միջոցառումը, որն ընդգրկում էր առավոտից մինչեւ կեսգիշեր շարունակվող մշակութային հագեցած ծրագիր: Հյուրերը դիտեցին մի քանի մանկապարտեզներում կազմակերպված հանդեսները, ներկա եղան երկրագիտական թանգարանում գործող ցուցահանդեսին եւ երաժշտական դպրոցի սաների հավեսու համերգին, այցելեցին եկեղեցի, ծերանոց, ծաղիկներ դրեցին զոհված ազատամարտիկների հուշարձանին:

«Քրիստոնեական մշակութային ծառայություններ» կազմակերպության երեւանյան գրասենյակի տնօրեն Լեւոն Բաղդասյանը զրույցի ժամանակ ասաց, որ իրենք զարմացած են նման հարուստ մշակութային գործունեությամբ ու շնորհալի երեխաներով: «Մանուկների արվեստը մեզ համար նորություն չէ. տարեկան գործ ենք ունենում 130 հազար երեխայի հետ, բայց այսօր, տեսնելով փոքրիկ աբովյանցիների պարն ու նկարչական աշխատանքները, լսելով երգն ու ասմունքը՝ հիացած ու հպարտ եմ, որ իմ հայրենիքում այդպիսի շնորհալիներ կան: Մինչդեռ սրանք այն մանուկներն են, որոնք ծնվել են մութ, ցուրտ տարիներին, երբ կանայք դժվարությամբ էին համածայնում երեխաներ ունենալ», ասաց պրն Բաղդասյանը:

Իսկ ԱՄՆ Բեվերլի Հիլզ քաղաքից ժամանած 9 ամերիկացի հյուրերի կազմում գտնվող հոգեւոր հովիվը, որի եկեղեցին երկար տարիներ այցելել է ԱՄՆ նախկին նախագահ Ռեյգանը, ասաց, որ հայ մանուկներն իրենց օժտվածությամբ հաղթել են ամերիկացի հասակակիցներին:

Այնուհետեւ ժամը 19-ից մինչեւ կեսգիշեր քաղաքապետարանի դիմացի պուրակում տեղի ունեցավ փառատոնի եզրափակիչ համերգը՝ Աբովյանի երաժշտական եւ պարային խմբերի մասնակցությամբ:

Կյանքի փառատոն... Այսինքն՝ անկախ դժվարություններից ու արտագաղթից, կյանքը շարունակվում է մեզ՝ մնացողներիս ու մեր երեխաների համար, ովքեր ուզում են անհոգ ապրել իրենց բաժին մանկությունը:

ԼԻԼՈՆ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ

ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅՈՒՆ

Հին ու նոր Խարբերդների պատմությունը

Նոր Խարբերդի թիվ 2 միջնակարգ դպրոցի հայրենագիտական թանգարանը վերանվանվեց Մեծ եղեռնի նահատակ, հին Խարբերդցի պրոֆեսոր Հովհաննես Պուճիգանյանի անունով:

Դեռեւս մեկ տասնամյակ առաջ դպրոցի պատմության ուսուցչուհի Ե. Սաֆարյանի ուժերով ստեղծվեց թանգարանը: Այն իր մեջ ներառում է Հին եւ Նոր Խարբերդների ժամանակագրական պատմությունը, հարուստ տեղեկություններ է պարունակում Խարբերդ նահանգի գյուղերի նիստուկացի, սովորույթների, ճանաչված գործիչների մասին: Այստեղ պահպանվում են խարբերդցիների տարազներ, կենցաղային իրեր, աշխատանքային գործիքներ: Խարբերդում ժամանակը կանգ է առնում 1915-ին եւ շարունակվում միայն 1929-ից, երբ եղեռնից մազապուրծ մի քանի ընտանիքներ հիմնադրում են Նոր Խարբերդը: Եվ այսօր նրանց զավակները ներկայացնում են իրենց նախնիներին: Դպրոցի աշակերտները թանգարանի այցելուներին պատմում են իրենց անվանի հայրենակցի, պրոֆեսոր Հովհաննես Պուճիգանյանի բարոյագիտական, փիլիսոփայական եւ մանկավարժական աշխատությունների մասին, որոնք համահունչ են մեր օրերին, խորհուրդներ են ազատ եւ անկախ երկրի քաղաքացիներին: Պուճիգանյանի աշխատություններում շեշտվում է կրոնի մեծ դերը հզոր երկրի ձեւավորման գործում. «Ես կսոսկամ անհավատ երիտասարդութենեն, սիրէ Աստվածդ, որ սիրես հայրենիդ»:

Թանգարանի բացման արարողությանը ներկա էին ԵՊՀ ռեկտոր Ռ. Մարտիրոսյանը, աստվածաբանության ֆակուլտետի դեկան Շահե արք. Աճեմյանը, լեզվաբաններ, գիտնականներ, դերասաններ, հին խարբերդցիներ: Հայաստան էր ժամանել նաեւ պրոֆեսորի անդրանիկ թոռը՝ Լիոնի համալսարանի պրոֆեսոր, «Բանբեր» թերթի խմբագիր Արի Թոփուզխանյանը: Ներկա էր նաեւ թոռնուհին Սեդա Պուճիգանյանը:

ԱՍՏՂԻԿ ԲԵԳԵԼՅԱՆ

ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ

Քարափոսի գեղեցկությունը
Ցուցասրահում բնապատկերներ են

«Արվեստը մարդն է, գտնված բնություն» 19-րդ դարի մեծագույն նկարիչներից մեկի՝ Վինսենթ վան Գոգի այս միտքը համահունչ էր Մշակույթի զարգացման բարեգործական հիմնադրամի ցուցասրահում ներկայացված կտավներին: Սպարտակ Հայրապետյանի գեղանկարչության մեջ առանձնահատուկ տեղ էին գրավել քարափոսերով ստեղծված բնապատկերները: Հատկանշական էին «Գյուղը», «Սեւանա կղզին», «Վանեվան եկեղեցին» ստեղծագործությունները, որոնք նկարիչը ստեղծել էր բնության պարգեւած «գույներով» քարափոսերով: Յուրաքանչյուր նման աշխատանքի ստեղծումը տեւել է մեկ ամիս:

«Ես բնության մարդ եմ եւ իմ ստեղծագործություններում փորձում եմ ավելի տեսանելի դարձնել բնության ու մարդու սերտ կապը: Ամիսներով շրջել եմ հայրենի Մարտունու սարերում, հավաքել գույնզգույն քարափոսեր եւ արեւի ու անձրեւի տակ անգամ չփչացող այս բնատուր «նյութերով» «նկարել»: Այս գործերում բացակայում են ներկերն ու վրձինը», ասաց նկարիչը:

«Առաջին անգամ եմ տեսնում, որ ժայռերի մամռակալած մակերեսից պոկված մանրաթերթիկներով նման գեղանկարչության տեսակ է ստեղծվում», կտավներից մեկի եսեւում այսպես էր մակագրել Շահեն Խաչատրյանը: Նկարչի ձեռքի գործերն էին նաեւ պոլիկարբոնատի արտադրական թափոնից պատրաստված արձանիկները:

Մարտունիում ծնված արվեստագետի վրա մեծ ներգործություն է ունեցել հայրենի բնաշխարհը՝ ուստի նրա նկարների մեծ մասը կազմում են բնապատկերները: Դրանցից էին «Աստղը Արգիճի գետափին», «Ամպամած օր Սեւանում», «Արգիճի գետափ», «Կոթա տաճար» կտավները: Մոսկվայի ժողովրդական արվեստների համալսարանում ուսանած նկարիչը ունեցել է բազմաթիվ ցուցահանդեսներ Երեւանում, Մոսկվայում, հայրենի Մարտունիում, Թբիլիսիում, այլ երկրներում: Արժանացել է պատվոգրերի եւ դիպլոմների: Մասնակցել է Մոսկվայի համամիութենական փառատոնին՝ «Շմեռային տեսարան» եւ «Դիմանկար» նկարներով:

ԱՐՄԵՆ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ԿԱՆԱԴԱ

MGM-ը ստացել է «Assignment Berlin» ֆիլմի ցուցադրման իրավունքը

Կանադայում լույս տեսնող ՈԱԿ «Ազգայ» շաբաթաթերթը հայտնում է, որ ֆիլմարտադրության ամերիկյան MGM հայտնի ընկերությունը երկար տարիների բանակցություններից հետո ի վերջո կարողացել է ձեռք բերել «Assignment Berlin» («Բեռլինյան հանձնարարություն») ֆիլմի ցուցադրման իրավունքը: Ֆիլմը պատմում է Սողոմոն Թեհլիրյան երեւույթի մասին, որը 1921 թվի մարտի 15-ին գնդակահարեց Հայկական ցեղասպանությունը կազմակերպողներից եւ իրագործողներից մեկին՝ Թալեաթին: Արտադրել է տասնութ տարի առաջ արվեստագետ Հրայր Թուխանյանը, կնոջ՝ Սոնայի գրած համանուն բառերերկի հիման վրա, բայց ամերիկյան էկրանների վրա երբեք չի ցուցադրվել: Այդ ժամանակ ֆիլմի տարածման իրավունքը ստացած «Inter Continental Releasing Corporation»-ը ֆիլմը ցուցադրել է միայն արտասահմանում, այն էլ միայն հատուկենտ երկրներում: Ֆիլմի հարցը վերարծարծվել է վերոհիշյալ ընկերության սնանկ հայտարարման առիթով: MGM-ի Orion ընկերությունը ստացել է Ամերիկայում ֆիլմը ցուցադրելու իրավունքը, մինչդեռ Թուխանյանը՝ ֆիլմի տեսաերիզները վաճառելու մենաշնորհը Հյուսիսային Ամերիկայում:

Ֆիլմում դերեր են ստանձնել դերասաններ Էդդի Մեքհան, Վել Էյվերին, Ժիրայր Փափազյանը, Գրիգոր Սաթամյանը, Հրանտ Մարգարյանը, Գայանե Հովսեփյանը, երգիչներ՝ Մայքլ Բրնոյանը, Արա Բերբերյանը եւ բազմաթիվ օտարազգի դերասան-դերասանուհիներ:

Ըստ թերթի տվյալների, Թուխանյանը ծնվել է Լիբանանում: Ավարտել է Սիրակուզայի համալսարանը, որի շրջանավարտ է եղել նաեւ կինը՝ Սոնան, որն իր մահկանացուն կնքել է 1997-ին՝ չարժանանալով ֆիլմի «վերակենդանացման» ներկա ուրախությունը վայելելու բախտին: «Առանց Սոնայի միտի չկարողանայի ֆիլմը պատրաստել», ասել է Հրայր Թուխանյանը:

Հ. Ծ.

ՄՇԱ(Ա)ԿՈՒՅԹ

Մոլուցքից ծնված հանճարեղ տաղանդը
Կամ այն մասին, թե ինչպես կարելի է վարկաբեկել նորագիտի երգչուհուն

Ուրեմն այսպես. **ժողովրդի կարը, անխակտելիությունը ժամանակների հետ խախտվել էր**: Բայց քանի որ **հայ ժողովուրդն իր պատմության ամենաճգնաժամային տարիներին բռնվում է գոյատեւելու մոլուցքով, ապա ծնում է հանճարեղ տաղանդներ** (ոչ թե սովորական հանճարներ կամ տաղանդներ, այլ՝ հենց հանճարեղ տաղանդներ): Այս մասին անպայման իմանում է Խ. Բաղդասարյանը (Բերձոր) եւ ողջ հայ ժողովրդին ի Հայաստան եւ ի սփյուռս, հայտարարում այս հանճարեղ տաղանդի մասին: Խոհեր է ունենում այդ մասին, այս խոհերը գրի առնում, տպագրում «Իրավունք» շաբաթաթերթի 2000 թ. հունիսի 16-ին 44-րդ համարում:

Կարելի է ավելին ասել. Գրիգոր Լուսավորիչը, Մաշտոցը, Խորենացին, Շիրակացին, Նարեկացին, Ներսես Շնորհալին, Ռուբինը, Ֆրիկը, Աբովյանը, Սունդուկյանը, Կոմիտասը, Թումանյանը, Թամանյանը, այնուհետեւ նրանց շարունակելու եկած Ավ. Իսահակյանը, Չարենցը, Մարտիրոս Սարյանը եւ այլ հռչակավոր տաղանդներ (ոչ թե հանճարեղ, այլ ընդամենը հռչակավոր տաղանդներ) գուցե չկարողանային փրկել մեր ազգը, մեր մշակույթը, եթե ազգը չբռնվեր գոյատեւելու մոլուցքով, չընդհատեր տաղանդների վերարտադրության գործընթացը եւ մոլուցքի մեջ չծներ հանճարեղ տաղանդին՝ Ալլա Լեւոնյանին: **Այսօրվա մեր լոտոբանանային պետության սկանվորդակրոսվորդային ինտելեկտով շարժվող հասարակությունն առօրյա թմբիրից հանում եւ աշխուժացնում են սպորտային աշխարհի մարզիկների** (այո, այո, սպորտային եւ ոչ թե, ասենք, եռանկյունաչափական, գյուղատնտեսական կամ ատամնատեխնիկական աշխարհի մարզիկների) **ու անհատ արվեստագետների** (ոչ թե արվեստագետների հոտերի) **հաջողությունները հանրապետությունում եւ նրանից դուրս**: Այս ամենի ենթատեքստում Խ. Բաղդասարյանը (Բերձոր) անպայման որոշ դիտարկումներ է կատարում ոչ թե Ռոբերտ Ամիրխանյանի, Ռուբեն Հախվերդյանի, Ֆորշի, Շուշան Պետրոսյանի եւ այլոց, որոնք **հունցվել են գոյություն ունեցող ավանդույթներով եւ երեւակվել ազգային գենով**, այլ հենց Ալլա Լեւոնյան հանճարեղ տաղանդի հետ, որն **իր մեջ ամփոփել է մի ամբողջ դարաշրջան**: Ալլա Լեւոնյանը, ըստ Խ. Բաղդասարյանի (Բերձոր), **ճիշտ խնամելու եւ խնամվելու դեպքում ընդունակ է պատռել համաշխարհային շոու-բիզնեսի ցանկացած թաղանթ**: Խ. Բաղդասարյանի (Բերձոր) կարծիքով, Ալլա Լեւոնյանի **զուտ հայկական մոնոդիկ երաժշտությունն այսօրվա բաղդատման, փեղկված ծակասագրերի եւ կոտորակվելու ենթագիտակցական ճիչն է՝ համեմված հիշողությամբ, ամենօրյա հոգսերով, անմեկնելի, բայց ոչ ամպամած աղագային ընդարաջ...**

Պա՞հ, պա՞հ, պա՞հ...

Իսկ դուք ասում եք:

Հայոց պատմության ամենասովորական տարիներին էլ, երբ ազգը ոչ մի մոլուցքով էլ բռնված չի եղել, հանճարեղ, տաղանդավոր, նաեւ սովորական խոհագրություններ ծնվել են: Բայց ահա, մեզ պետք էր հասնել մեր պատմության ամենաճգնաժամային տարիներին, որպեսզի մոլագար մոլուցքը մոլեգներ Խ. Բաղդասարյանի (Բերձոր) հոգում եւ նա երկներ իր խոհը՝ «Ավանդույթները չեն կորչում»: Հույս ունենանք, որ երգչուհի Ալլա Լեւոնյանն այս մոլուցքը կարդալուց հետո չի դիմի մարդու իրավունքների պաշտպանության ազգային եւ միջազգային ատյաններին՝ իրեն հասցված անպատվության պատճառով, եւ Խ. Բաղդասարյանը (Բերձոր) հերթական մոլուցքը (խոհը) կծնի: Դա նույնպես կլինի մեր անցած ազգային համածայնություններին, դարերից հոսող հիշողության, օրինականությանը մեր անհնազանդության, մեր հույսերի սկանվորդակրոսվորդային խոհ...

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

Պարտություն առաջին խաղում

«Արաֆ»-Սիգմա՝ 1-2

«Ինտերտոտոյի» գավաթի խաղարկության առաջին շրջանի առաջին հանդիպման ժամանակ Արարատի «Արաֆը» պարտություն կրեց Չեխիայի Օլոմուց քաղաքի «Սիգմա» թիմից:

Աբովյանի մարզադաշտում անցկացված այս խաղի սկիզբը շատ անսպասելի էր. ընդամենը 26 վայրկյան էր անցել, երբ հյուրերի խաղացող Ստանիսլավ Վլցեկը գրավեց «Արաֆի» դարպասը: Արարատի ֆուտբոլիստներն ասիճանաբար սթափվեցին եւ կարողացան հավասարեցնել խաղը: Բայց հանդիպման 38-րդ րոպեին նրանց նոր հաճություն էր սպասում: Նույն Վլցեկը խփեց 2-րդ գոլը:

Երկրորդ խաղակեսում «Արաֆը» խլեց նախաձեռնությունը, մի շարք վտանգավոր գրոհներ ծեռնարկեց, որոնցից մեկում հասավ հաջողության: Փոխարինման մտած Շիրակ Սառիկյանը 75-րդ րոպեին կրճատեց հաշվի տարբերությունը՝ 1-2: Իհարկե, սեփական խաղադաշտում կրած պարտությունը շատ դժվարացրեց «Արաֆի» հաջորդ փուլ մտնելու հարցը:

Այս թիմերի պատասխան խաղը տեղի կունենա Օլոմուց քաղաքում, հունիսի 25-ին:

Ներկայացնենք «Ինտերտոտոյի» գավաթի խաղարկության այս փուլի խաղերից մի քանիսի արդյունքները. «Ֆլորիանա» (Մալթա)-«Սթաբեկ» (Նորվեգիա) 1-1, «Զագլեմբե» (Լեհաստան)-«Վիլաշ» (Ադրբեջան) 4-0, «Գլենավոն» (Հյուսիսային Իռլանդիա)-«Սլավեն» (Խորվաթիա) 1-1, «Նեա Սալամինա» (Կիպրոս)-«Վլաժնիա» (Մալթա) 4-1, «Մոգիլյով» (Բելառուս)-«Սիլկեբորգ» (Դանիա) 2-1, «Ցիբալյա» (Խորվաթիա)-«Օբիլիչ» (Հարավսլավիա) 3-1, «Պելիստեր» (Մակեդոնիա)-«Հոբշայդ» (Լյուքսեմբուրգ) 3-1, «Պրիմորիե» (Սլովենիա)-«Վեսթելո» (Բելգիա) 5-0, «Դուկլա» (Սլովակիա)-«Դինաբուրգ» (Լատվիա) 0-0:

«Բ» խմբի մրցաշարն ավարտվեց

Եվրոպայի առաջնությունում Իտալիա-Շվեդիա եւ Բելգիա-Թուրքիա հանդիպումներով ավարտվեց «Բ» խմբի մրցաշարը: Այս խմբից հաջորդ եզրափակիչում հանդես կգան Իտալիայի եւ Թուրքիայի հավաքականները:

Իտալիա-Շվեդիա՝ 2-1: Նախապես հաջորդ փուլի իրավունք նվաճած Իտալիայի հավաքականի գլխավոր մարզիչ Դինո Զոֆը այս խաղում հիմնավորապես փոխել էր իր թիմի կազմը: Նա նշեց, որ ցանկանում է չի լինի բոլոր խաղերին մասնակից անել միեւնույն ֆուտբոլիստներին: Բայց որ Իտալիայի հավաքականի փոխարինողներն էլ չեն զիջում հիմնական կազմի խաղացողներին, հաստատեց Շվեդիայի հետ հանդիպումը: Բայց նշենք, որ այս խաղը նաեւ այլ ելք կարող էր ունենալ: Շվեդներին միայն հաղթանակ էր անհրաժեշտ, եւ նրանք շատ ակտիվ անցկացրին հանդիպումը: Գրոհելով մեծ ուժերով՝ սկանդինավցի ֆուտբոլիստները բավականին թվով գոլային հնարավորություններ ստեղծեցին: Բայց կամ հիանալի էին խաղում իտալացիների պաշտպաններն ու դարպասապահ Ֆրանչեսկո Տոլդոն, կամ էլ դիպուկ չէին շվեդները: Թվում էր, թե մարզական բախտը նրանցից երես է թեքել: Իտալացիները ռացիոնալ էին գործում հիմնականում առավելությունը հակագրոհներին: Խաղի 39-րդ րոպեին նրանք հաջողության հասան. Ալեսանդրո դել Պիերոն անկյունայինից գնդակն ուղարկեց Լուիջի դի Բյաջոյին, որը գլխի հարվածով գրավեց մրցակից թիմի դարպասը:

Շվեդների համար հույսի շող փայլատակեց 77-րդ րոպեին, երբ Բենետ Անդերսոն-Հենրիկ Լարսոն երկայլ կոմբինացիան ավարտվեց վերջինիս դիպուկ հարվածով՝ 1-1: Բայց խաղավարից 2 րոպե առաջ բարձր վարպետությամբ փայլեց դել Պիերոն: Խաբս տալով մրցակցի 2-3 խաղացողների՝ նա շեշտակի հարվածով հաղթանակ բերեց Իտալիայի ընտրանուն:

Թուրքիա-Բելգիա՝ 2-0: Շատերը նախապես խմբի վերջադահի դերը հատկացրել էին Թուրքիայի հավաքականին, բայց թիմը կարողացավ գրավել 2-րդ տեղը եւ շարունակել պայքարը: Այս խաղում Բելգիայի հավաքականի ֆուտբոլիստները գոլ խփելու մի շարք հնարավորություններ ունեցան, բայց չկարողացան օգտագործել դրանցից ոչ մեկը: Թուրքերը եւս սուր էին գործում եւ երկու անգամ հասան հաջողության: Երկու դեպքում էլ գոլերի հեղինակ դարձավ Հական Շուքուրը: Առաջին խաղակեսի վերջին րոպեին, թուրքերի գրոհի ժամանակ բելգիացիների դարպասապահ Ֆիլիպ դե Վիլդեն հաղաղեց, եւ Շուքուրը բարձր ցատկով գնդակն ուղարկեց դարպասը: 70-րդ րոպեին, օգտվելով պաշտպանների սխալից, Թուրքիայի հավաքականի կենտրոնական հարձակվողն անարգել խփեց նաեւ 2-րդ գոլը:

Բելգիացիների դարպասապահ դե Վիլդեի անհաջողությունները շարունակվեցին: Խաղավարից մի քանի րոպե առաջ մրցավարը նրան դաշտից հեռացրեց կոպիտ խաղի համար:

Թուրքիա-Բելգիա խաղում հետաքրքիր դեպք արձանագրվեց. 40-րդ րոպեին վնասվածք ստացավ գլխավոր մրցավար Կիմ Միլտոն Նիլսենը (Դանիա), եւ նրան փոխարինեց պահեստային (4-րդ) մրցավար Գյունտեր Բենկեն (Ավստրիա):

«Բ» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Իտալիա	3	3	0	0	6-2	9
2. Թուրքիա	3	1	1	1	3-2	4
3. Բելգիա	3	1	0	2	2-5	3
4. Շվեդիա	3	0	1	2	2-4	1

ՀԱՕԿ

Բարձր պարգեւ՝ մեծ ավանդի համար

Միջազգային օլիմպիական կոմիտեն ազգային օլիմպիական կոմիտեներին շնորհում է «Սպորտը եւ տիեզերքը» անվամբ մրցանակը՝ իրենց հայեցողությամբ պարգեւատրելու համար օլիմպիզմի եւ սպորտի համակողմանի զարգացման գործում մեծ ավանդ մուծած կազմակերպություններին ու անհատներին:

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը, որը ստանձնել է ազգային օլիմպիական ակադեմիայի պարտականությունը, նշված բնագավառում կատարած բեղմնավոր աշխատանքի համար արժանացավ 2000 թվականի «Սպորտը եւ տիեզերքը» մրցանակին, որը գեղեցիկ գավաթ է:

ՀԱՕԿ-ի նախագահ, ընտրամարտի աշխարհի եռակի չեմպիոն Բենուա Փաշայանը հանդիսավոր պայմաններում մրցանակը հանձնեց Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ռեկտոր, օլիմպիական ազգային ակադեմիայի նախագահ, պրոֆեսոր Վահրամ Առաքելյանին եւ մաղթեց նոր հաջողություններ օլիմպիզմի եւ սպորտի զարգացման գործում:

Ընդունելով բարձր պարգեւը՝ պրն Առաքելյանը շնորհակալություն հայտնեց ինստիտուտի եւ ակադեմիայի աշխատանքը բարձր գնահատելու համար եւ հավաստիացրեց, որ իրենք հետայսու եւս ջանք ու եռանդ չեն խնայի՝ օլիմպիզմն ու սպորտը համակողմանիորեն զարգացնելու համար:

ԱՐՏԱՎԱԶԴ ՍԱՔՈՆՅԱՆ

Բրիջը օլիմպիական մարզաձեւ է

Կայացավ բրիջի Հայաստանի զույգերի բաց առաջնությունը: Հրավեր էին ստացել նաեւ Վրաստանի մարզիկները, այդ երկրի մարզական բրիջի ֆեդերացիան խոստացել էր երկու զույգ ուղարկել, սակայն նրանք այդպես էլ չժամանեցին:

Առաջնությունում փայլուն հանդես եկավ եւ հանրապետության չեմպիոնի կոչումը նվաճեց Լեւ Սեւիյան-Արսեն Կարապետյան զույգը: Ի դեպ, պրիզ ամսին կայացած Հայաստանի թիմային առաջնությունում նրանք, Զախար Մնջոյան-Արթուր Անտոնյան զույգի հետ միասին, համոզիչ հաղթանակ էին տարել: Հարկ է նշել, որ Սեւիյանն ու Կարապետյանն իրենց բարձր որակավորումը հաստատել էին նաեւ վերջերս անցկացված Վրաստանի զույգերի բաց առաջնությունում, որտեղ 24 երկյակների պայքարում գրավել էին երկրորդ տեղը: Ուրախությամբ տեղեկացնենք, որ մեր մարզիկները առաջին անգամ հանրապետությունը կներկայացնեն եվրոպայի երիտասարդական թիմային առաջնությունում, որը կանցկացվի հուլիսի 6-16-ը, Թուրքիայի Անթալիա քաղաքում: Հայաստանի թիմում կընդգրկվեն նաեւ երկու վրացի բրիջիստներ՝ Գարիբվիլի եղբայրները, որոնք, հակառակ իրենց ազգությանը եւ քաղաքացիությանը, հանդես կգան մեր դրոշի ներքո:

Հաշվի առնելով, որ բրիջը որպես մարզաձեւ դեռեւս շատ հայտնի չէ մեր լայն հասարակայնությանը, մի քանի փաստ ներկայացնենք ընթերցողին:

Բրիջը միակ թղթախաղն է, որն ամբողջ աշխարհում զարգանում է որպես մարզաձեւ: Աշխարհում մոտավորապես 200 մլն մարդ բրիջ է խաղում: 1932 թ. ստեղծվել է Բրիջի միջազգային լիգան եւ 1932-39 թթ. անցկացվել է եվրոպայի 8 առաջնություն: 1948 թ. կազմակերպվել է եվրոպայի բրիջի լիգան (EBL): 1950 թ. կայացել է աշխարհի առաջին թիմային առաջնությունը (Բերմուդյան գավաթը): 1960 թ. ստեղծվել է բրիջի համաշխարհային ֆեդերացիան (WBF) եւ հիմնադրվել է Համաշխարհային օլիմպիադան: 1962-ից անցկացվում են աշխարհի առաջնություններ կանանց զույգերի համար: 1978-ին հիմնադրվել է կանանց թիմերի աշխարհի առաջնությունը (Վենետիկի գավաթ): Նույն ժամանակվանից ի վեր անցկացվում են մրցումներ պատանիների համար: 1994-ից սկսած եվրոպայում կազմակերպվում են առաջնություններ դպրոցականների համար:

Հայաստանի մարզական բրիջի ֆեդերացիան ստեղծվել է 1991 թ.: Նույն՝ 1991 թ.-ից սկսած անցկացվում են Հայաստանի թիմային եւ զույգային առաջնություններ:

ՆԱՏՕ-ի ակադեմիաներում բրիջը պարտադիր դասընթաց է: Չինաստանում ամբողջ Քաղաքացիներն բրիջ է խաղում:

Շախմատի աշխարհի չեմպիոն Ա. Ալյոխինը համարում էր, որ բրիջը ուղեղը մարզելու լավագույն միջոցն է:

Հայտնի կինոդերասան եւ համաշխարհային բրիջի ակտիվ գործիչ Օմար Շարիֆը 1990 թ. ԱՄՆ-ում բրիջի վիթխարի մրցախաղ է կազմակերպել՝ 200 հազար դոլար մրցանակային հիմնադրամով:

1995 թ. միջազգային օլիմպիական կոմիտեն բրիջը ճանաչեց որպես օլիմպիական մարզաձեւ: Բրիջն ընդգրկված է ձմեռային օլիմպիադիայի ծրագրում:

ԱՐՓԻԼԵ ԲԱՐԹԻԿՅԱՆ

Ժուկովան՝ Եվրոպայի չեմպիոնուհի

Ավարտվեց Աջարիայի մայրաքաղաք Բաթումում անցկացված շախմատի եվրոպայի կանանց անդրանիկ առաջնությունը: Մրցումներում հանդես եկան աշխարհամասի 13 երկրների 32 մարզուհիներ: Առաջնությանը մասնակցելուց հրաժարվեցին մի շարք հանրահայտ շախմատիստուհիներ. պատճառը չափազանց փոքր մրցանակային հիմնադրամն էր:

«Նոկաուտ» համակարգով անցկացված մրցումների եզրափակիչ մրցախաղում հանդիպեցին Նատալյա Ժուկովան (Ուկրաինա) եւ Եկատերինա Կովալեւսկայան (Ռուսաստան): Հաղթելով 2,5-1,5 հաշվով՝ եվրոպայի առաջին չեմպիոնուհու կոչումը նվաճեց Ժուկովան:

ԽԱՉԲԱՌ

Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները



Ուղղահայաց

1. Ամոր: 2. Գրիմ: 3. Կանն: 4. Սմբաս: 7. «Լամպրե»: 8. Արգանդ: 9. Ժուկովա: 13. Արարատյան: 14. Արագածոտն: 17. Կանեփ: 18. Լատուն: 19. ԱԻՄ: 20. Սուլ: 23. Վարկած: 25. «Երգիկ»: 26. «Ավրորա»: 30. Շանել: 31. Ճահիճ: 33. Ասլի: 34. Կծիկ:

Հորիզոնական

5. Խմբերգ: 6. Մայամի: 10. Ռաղոն: 11. Մերան: 12. Կաղուր: 15. «Արծվաբերդ»: 16. Կրակ: 18. Լուվր: 19. Ադա: 21. Ընտանի: 22. Ուրարտու: 24. Մել: 27. Թարփ: 28. Նավթ: 29. Մարգարիտա: 32. Համամ: 33. Ամիակ: 35. Մայրի: 36. «Ուեմբլի»: 37. Շիշկին:

Ուղղահայաց

1. Ֆլամանդացի նկարչի անուն ազգանունը: 2. Մի մասին վերաբերող, առանձին: 3. Ի՞նչ են ավելի սիրում գավառեցիները: 4. Նշանավոր տոհմի պատկանող անձ: 5. Կենտրոնական փողոց Սանկտ Պետերբուրգում: 6. Հայկական հեքիաթասական տոմարի ամիսների 3-րդ օրվա անունը: 7. Արփայի աջ վտակը: 9. Պատմական մարզ Իսպանիայի հյուսիսում: 10. Կնիքին մոտիկ բառ: 12. Վիզ, ...: 13. Ըստ հունական առասպելի, Արգո նավով ոսկե գեղմի ետեւից գնացողներից որեւէ մեկը: 14. Սարդարապատի հուշահամալիրը նախագծող ճարտարապետը: 17. Նոր տարի, Ամանոր, ...: 18. Ճշմարիտ, հավատի, ստույգ: 21. Հայ գրող: 22. Խոհանոցային պարագա: 23. Մտահանգման տեսակ: 24. Գիտական լուրջ ուսումնասիրություններով զբաղվող անձ: 25. Երկաթահանքի արդյունահանման կենտրոն Ուկրաինայում՝ ... ռոգ: 26. Լիճ Աֆրիկայում: 29. Բուժիչ թրջոց: 30. Սփյուռքահայ երգիծանկարիչ: 33. Հունական դիցուհին Աթենաս է, հայկականը՝ ...: 34. Թաղամաս Երեւանում:

Հորիզոնական

3. Ամերիկահայ օպերային երգչուհի, սոպրանո: 5. Լիճ Հայաստանում: 7. Քաղաք Հյուսիսային Չինաստանում: 8. Աշխարհահռչակ պարուհի, Եսենինի կինը: 10. Թումանյանի ծննդավայրը: 11. Երաժշտական ժանր: 13. «Մասյաց աղավնի» ամսագրի խմբագիրը, հիմնադիրը: 15. Խոտածածկ տարածք: 16. Ֆլամենկոյի հայրենիքը: 17. Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ծայրամասային ծովը: 19. Հայ կոմպոզիտոր: 20. Պատերազմական գործողություն, զինված հարձակում: 21. Երեւանին մոտիկ բնակավայր: 24. Ծակող գործիք: 27. Համաստեղություն երկնի հյուսիսային կիսագնդում: 28. Իրավաբանական տերմին: 30. Պատերազմի դաշտում ամենաոգեշունչ մարդը: 31. Հայ օպերային երգչուհի, կոլորատուրային մեццո-սոպրանո: 32. Տարածաշրջանային պետություն: 34. Ասլանի ծածկանուններից: 35. Ծով: 36. Ժամանակակից տաղանդավոր կոմպոզիտոր: 37. Հելենայի հայրենի ծեր: 38. Կենդանի օրգանիզմում թելիկների խուրձ:

Կազմեց Է. Ավետիսյանը

ԱԶԳ

Օրվա հետքերով

ՄՈՍԿՎԱ

Քոչարյան-Ալիեւ դեմ առ դեմ իններորդ հանդիպումը

Սկիզբը էջ 1

Այս օրերին ՈՂ մայրաքաղաք Մոսկվայում է Հայաստանի բարձրաստիճան ղեկավարությունը. նախագահ Ռոբերտ Քոչարյան, վարչապետ Անդրանիկ Մարգարյան, պաշտպանության նախարար Սերժ Սարգսյան, արտգործնախարար Վարդան Օսկանյան, ԱՊՀ կանոնադրական եւ այլ մարմիններում ՀՀ լիազոր ներկայացուցիչ Սուրեն Հարությունյան:

Այսօր սկսվող ԱՊՀ գագաթաժողովի մասնակից երկրների ղեկավարությունից առաջինը Մոսկվա ժամանեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը եւ օդանավակայանից անմիջապես ուղեւորվեց Կրեմլ՝ հանդիպելու Ադրբեջանի իր պաշտոնակից Հեյդար Ալիեւին: Դեմ առ դեմ տեղի ունեցած Քոչարյան-Ալիեւ հանդիպումը իններորդն էր, եւ ինչպես նախորդ դեպքերում, այս անգամ եւս անթափանց մնաց մամուլի համար: Թե ինչ փոխզիջումների ուրջ են պայմանավորվում երկու երկրների ղեկավարները՝ հավանաբար հայտնի է միայն իրենց: Եթե հայտնի չէ, թե ինչ է գիջելու պատերազմում պարտված Ադրբեջանը, ապա Հայաստանի դիրքորոշումը ԼՂ հարցում մեկ անգամ չէ, որ արտահայտել է նախագահ Քոչարյանը.

ա) ԼՂՀ-ն եւ Ադրբեջանը պետք է ունենան հորիզոնական հարաբերություններ, այսինքն՝ Ստեփանակերտը չի ենթարկվի Բաքվին, բ) ԼՂՀ բնակչության անվտանգությունը պետք է երաշխավորված լինի, գ) պետք է բացառվի ԼՂՀ անկլավային դիրքը, ասել է թե՝ Հայաստանը եւ ԼՂՀ-ն պետք է ունենան ցամաքային հաղորդակցություն:

Մեզ հայտնի չէ, հատկապես ինչ

ՌՈՅԵՐ-ՍՈՒԼԴՐԵՍ

Նախագահներ Շեւարդնաձեն. Քոչարյանը. Պուտինը. Ալիեւը «3+1» ֆորմատով

փոխզիջումների մասին են խոսել Քոչարյանն ու Ալիեւը ընդմիջումից հետո: Հայտնի է միայն, որ խոսք է գնացել հայ-ադրբեջանական հարաբերությունների մասին: Պարզ չէ նաեւ. ԼՂ հարցը քննարկվում է հայ-ադրբեջանական հարաբերությունների համատեքստո՞ւմ, թե՞ առանձին:

Երեկոյան, Երեւանի ժամանակով ժամը 21-ին ՈՂ-ում ՀՀ դեսպանատանը տեղի կունենա ընդունելություն, որի ընթացքում նախագահ Քոչարյանը կհանդիպի Մոսկվայում բնակվող նշանավոր հայ մտավորականների, գիտնականների, ակադեմիկոսների հետ: Միգուցե հնարավորություն կլինի Քոչարյան-Ալիեւ հանդիպման որոշ մանրամասների ծանոթանալ անձամբ որն Քոչարյանից:

Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումից հետո Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հանդիպեց Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեին, որի ընթացքում քննարկվել են երկկողմ հարաբերությունները, կովկասյան տարածաշրջանի իրավիճակը, ԱՊՀ զարգացման հեռանկարները: Վլադիմիր Պուտինն առանձին հանդիպումներ է ունեցել Հեյդար Ալիեւի եւ Ռոբերտ Քոչարյանի հետ: Նրանք հանդիպել են նաեւ երեքով: Վերոնշյալ հանդիպումները տեղի են ունեցել ոչ ԱՊՀ շրջանակներում, այլ ֆորմատով՝ «3+1»:

Հունիսի 19-ին Մոսկվայում սկսված եւ ավարտված ԱՊՀ պաշտպանության նախարարների խորհրդի նիստից հետո (թվով 35-րդը, որին առաջին անգամ մասնակցում էին համագործակցության բոլոր 12 երկրների նախարարները) երեկ շարունակություն ստացավ ԱՊՀ անդամ երկրների արտաքին գործերի նախարարների խորհրդի նիստը: Այդ հանդիպմանը քննարկվեցին Տաջիկստանի տարածքում կոլեկտիվ խաղաղարար ուժերը: Վերջին հարցը պարզաբանվեց այն հանգամանքով, որ Տաջիկստանն արդեն հանգիստ գոտի է: Ընդհանուր առմամբ ԱՊՀ անդամ երկրների արտաքին գործերի նախարարների նիստում դրված էր 24 հարց, որոնք ՈՂ արտգործնախարար Իգոր Իվանովի խոսքերով՝ «մի կերպ հաստատեցին քննարկել»:

Նույն «Պերգիդենս-օբելում» երեկ տեղի ունեցավ եւս մեկ միջոցառում. հանդիպում էին ԱՊՀ անդամ երկրների կառավարությունների ղեկավարները: Օրակարգում դրված էր 20 հարց, դրան գումարած նախորդ նիստերի որոշումները: Սա ԱՊՀ վարչապետների 34-րդ նիստն էր: Հանդիպումը տեւեց ուրջ 1,5 ժամ. կարելի է միայն պատկերացնել, թե ինչ արագությամբ են քննարկվում այդ հարցերը եւ ինչպիսին է ԱՊՀ արդյունավետության գործակիցը: Ինչեւէ, ԱՊՀ անդամ երկրների կառավարությունների նիստում առաջ քաշվեցին նոր ծրագրեր, քննարկվեց ԱՊՀ զարգացման ընդհանուր ծրագիրը մինչեւ 2005 թվականը: Վարչապետները քննարկել են նաեւ միջազգային ահաբեկչության դեմ համատեղ ծրագիր, արդեն 2001 թ. Մոսկվայում հիմնվելու է, այսպես կոչված, «Հակաահաբեկչական կենտրոն»:

ԲՈՒՄԵՐԱՆԳ

Աժ խոսնակի չափազանց...

Սկիզբը էջ 1

Նրա խոսքերով բացասական արձագանք է ստացել նաեւ Խաչատրյանի կողմից 280 հազար դոլար արժողությամբ զրահապատ մերենայի ձեռք բերման փաստը, ինչը ներկա սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակում միանգամայն բնական կերպով բնակչության դժգոհությունն է հարուցում: Դալլաֆյանի կարծիքով, խորհրդարանի խոսնակը պետք է բացատրություններ տա իր բազմաթիվ այցելությունների առնչությամբ:

Դալլաֆյանն ափսոսանքով նշեց նաեւ, որ Ազգային ժողովի նախագահը պատշաճ ուշադրություն չի հատկացնում հանձնաժողովի աշխատանքին: Ըստ հանձնաժողովի նախագահի, իր ղեկավարության որոշ Արմեն Խաչատրյանը ոչ մի անգամ չի հետաքրքրվել մշակվող օրինագծերով եւ ընդհանրապես պետական հանձնաժողովի գործունեությամբ: Խորհրդարանականը նշեց, թե ցանկալի կլիներ, որպեսզի Խաչատրյանը կիրառեր իր նախորդի՝ Կարեն Դեմիրճյանի աշխատանքային մեթոդը, որը հիանալի փոխհարաբերություններ ուներ պատգամավորների հետ, ինչպես նաեւ իր սեփական կարծիքն ուներ ամեն տեսակի գործողությունների առնչությամբ:

Ինչ վերաբերում է Խաչատրյանի գնահատության մեխանիզմներին, ապա, Դալլաֆյանի խոսքերով, ՀՀ Աժ-ի կանոնադրության 49-րդ հոդվածի համաձայն, խորհրդարանի խոսնակն ընտրվում է ձայների պարզ մեծամասնությամբ (131-ից 66 ձայնով), նույնքան ձայն է հարկավոր նաեւ նրան պաշտոնաթող անելու համար: Անհրաժեշտ է միայն նմանօրինակ օրենսդրական նախաձեռնությունը մտցնել Ազգային ժողովի օրակարգ:

Դիտորդների կարծիքով, խոսնակի պաշտոնաթողության պատճառներից կարող են դառնալ նաեւ տարաձայնությունները «Միասնություն» դաշինքի ներսում: Մասնավորապես տարաձայնությունները «Միասնություն» դաշինքի խորհրդարանական մեծամասնության առաջնորդի պաշտոնի թեկնածուի առնչությամբ: Այդ տարաձայնությունները կարող են լուրջ պատրվակ հանդիսանալ «Միասնություն» դաշինքի լիակատար պառակտման համար, ինչը կհանգեցնի քաղաքական դաշտի վերածեւավորման անհրաժեշտությանը: Դալլաֆյանն ասաց, որ հնարավոր է նոր խորհրդարանական խմբի ծեւավորում, ինչն, իր հերթին, կհանգեցնի ոչ միայն խորհրդարանի ղեկավարության փոխարինմանը, այլեւ հանձնաժողովի ղեկավարների, որոնց ընտրությունը պայմանավորված է եղել որոշակի պայմանավորվածությունների առկայությամբ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Բոլոր նրանց, ովքեր ցանկանում են ծանոթանալ հաշվապահության գաղտնիքներին եւ բարձրացնել իրենց գործունեության արդյունավետությունը

Հայաստանի հաշվապահների եւ աուդիտորների ասոցիացիան (ՀՀԱԱ) առաջարկում է հատուկ դասընթացներ

Ֆինանսական հաշվառման եւ կառավարման սկզբունքները

անվանմամբ

Դասընթացների նպատակն է հաշվապահական հաշվառման նոր համակարգում չմասնագիտացած անձանց ծանոթացնել ֆինանսական տեղեկատվության, հաշվետվությունների կազմման ու օգտագործման սկզբունքներին՝ ներառելով հետեւյալ թեմաները.

1. Հաշվային տեղեկատվական համակարգ
2. Նոր հաշվային ոլորտ
3. Միջազգային հաշվապահական ստանդարտների սկզբունքներ
4. Ֆինանսական հաշվետվությունների վերլուծություն
5. Ցնտեսական որոշումների կայացում
6. Ինվեստիցիայի կառավարում
7. Հարկային հաշվետվությունների հիմնավորում

Նախնական հաշվապահական կամ տնտեսագիտական կրթությունը պարտադիր չէ:

- 12 ժամ տեւողությամբ
  ուսման վարձը՝ 15 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ
- 40 ժամ տեւողությամբ
  ուսման վարձը՝ 30 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ

Դասընթացների ընթացքում տրամադրվում է անվճար գրականություն, որով մասնակիցները հնարավորություն կունենան տիրապետելու ֆինանսական հաշվետվությունների օգտագործման սկզբունքներին:

Դասընթացների ավարտից հետո հանձնվում է վկայական:

Դասընթացներին մասնակցելու եւ առավել մանրամասն տեղեկությունների համար դիմել՝ Կարապետ Ալենցը, 31 Ալոյնցի անվան Էկոնոմիկայի ինստիտուտ, V հարկ, ՀՀԱԱ-ի գրասենյակ հեռ. 541665, 249139, 249178, 249467 էլ. փոստ aaaa@arminco.com

IATA ԱՅԱՔՍ AJAX

Մեր օգնությամբ դուք կարող եք թռչել ցանկացած ուղղությամբ երկրագնդի ցանկացած կետ:

Բոլոր ավիաընկերությունները հասկացնում են զեղչերի մասին համակարգ:

Դուք կարող եք համատեղել Ձեր հանգիստը բուժման հետ Սոչիի, Գագրայի, Պիցունդայի, Ցալբայի առողջարաններում: Ուղեգրի արժեքը 20 օրվա համար սկսվում է 550 ԱՄՆ դոլարից:

Արժեքի մեջ մտնում է ավիատոմսերը, տեղափոխումը, օբեւանումը, 3-անգամյա սնունդը:

Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել
ավիատոմսերի համար 52-45-64, 53-01-93, 53-86-44,
տուրիզմի համար 53-24-32, 53-88-45
E-mail: ajax@arminco.com կամ այցելել մեզ Պուշկինի 43ա հասցեով

Հեռուստացրույցներ

21 հունիս

ՀԱՅԱՍՏԱՆ

9.00 Հայլուր
9.20 Հեռուստասերիալ «Լատինական փաստաբանը»
10.10 Հայորդաց տներ
10.20 Մամուլի կողակ
10.30 «Համայնապատկեր»
11.00 Գ/Ֆ «Փլանթեն ու Մալեյնը»
12.40 Բարի ախորժակ
13.00 Հայլուր
13.20 Ռուբիկոն+
17.00 Հայլուր
17.20 Մուլտֆիլմեր «Լոլո ոինգվինի արկածները», «Շատակեր ուռը»
18.00 Հեռուստասերիալ «Լատինական փաստաբանը»
19.00 1 լուր
19.10 «Հուսո աստղ»
19.50 «Աստղեր» վիճակախաղ (Արբանյակային հեռարձակմամբ
19.10 Կենսգիտերային ճեպընթաց)
20.25 Գույքային իրավունքներ
20.35 Տուն-տունիկ
21.00 Հայլուր
21.40 Հեռուստակատալոգ
21.45 Գ/Ֆ «Հմայիչ հիմարիկը»
23.40 Հայլուր
00.00 Կենսգիտերային ճեպընթաց
01.00 Ռուբիկոն+

ՊՐՈՄԵԹԵՎՍ

9.00 «Բարի լույս, Հայաստան»
10.10 «Ամեն ինչ հանուն էն սիրո»
18.00 Մուլտֆիլմ
18.10 Մանկական ժամ. սերիալ «Նինձյա կրիաները», սերիալ «Մահացու ճակատամարտ»
19.00 «Ամեն ինչ հանուն էն սիրո»
20.00 Լրաբեր
20.35 Ռ. Մավիսակալյանի «Հարցեր» հեռադիտակային ծրագիրը
21.20 Օրը
22.25 «1-02»
22.30 «Ուրախ» լոտո
23.30 Գ/Ֆ «16 մմ»

ԱՐ

9.00 Տոմար
19.05 Չղջիկ
19.30, 21.30, 24.00 Սուրհանդակ
20.00 Մամուլի խոսնակ
20.10 Գիտասպեր
20.30 Կամ-կամ
21.10 Դիվաղաղար
22.00 Չֆիլմ N11
22.30 Տարբերանքան
23.00 Համերգ
00.35 Ակնարք
00.40 Գ/Ֆ «Ելք դեպի կարմիրը» (ավարտին Սուրհանդակ)

ԿՏՎ

7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.20 Սերիալ «Բաբելոնյան աշտարակ»
16.00 Նորություններ
16.20 Մուլտերիալ «Ջոնի Քվեսթի անհավանական արկածները»
16.45 Ջունգլիների կանչը
17.10 ... Մինչեւ 16 եւ բարձր
17.45 Համով պատմություններ
18.00 Սերիալ «Բաբելոնյան աշտարակ»
19.00 Նորություններ
19.30 Ծիծաղի համայնապատկեր
20.05 Գ/Ֆ «Հյուսիսային աստղ» (դերերում՝ Ք. Լամբեր, Դ. Քաան, Ք. Մակֆորսակ, ԱՄՆ, 1996 թ.)
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
23.00 Ֆուտբոլ. Եվրոպայի առաջնություն. Հարավսլավիայի հավաքական-Իսպանիայի հավաքական
00.35 Ֆուտբոլ. Եվրոպայի առաջնություն. Դանիայի հավաքական-Չեխիայի հավաքական (2-րդ խաղակես)
01.45 Նորություններ
02.00 Վավ. ֆիլմ «Զբոսանք ամերիկյան կինոյում Մարտին Սքորսեզեի հետ»-2

ՊՐՏ

7.00, 8.00, 9.00, 10.00 Լուրեր
7.20, 7.50, 8.40, 9.45 Բարի լույս, Ռուսաստան
7.35, 9.35 Ընտանեկան նորություններ
8.20, 10.20 Սեւով սպիտակի վրա
8.30 ՊՏՊ-ի փոստը
9.20 Հերթապահ բաժանմունք
10.35 Մուլտսերիալ «Վերջին նստարանին»
10.45 Մուլտսերիալ «Սեւ ծովահենը»
11.10 Սերիալ «Գնչուհին»
12.05 Սերիալ «Մանտա Բարբարա»
13.00 Երկխոսություններ կենդանիների մասին
14.00, 18.00, 21.00, 00.00 Լուրեր
14.30 «Մարիինա ռոշչա»
15.00 Սերիալ «Սեւ մարգարիտ»
15.50 Սերիալ «Հարուստներն ու նշանավորները»
16.45 Երկու դաշնամուր
17.35 Իմ XX դարը
18.35 Վավերագրական սերիալ «Հազարամյակի գաղտնիքները» Արմեն Ցիգարխանյանի հետ
19.20 Սերիալ «Փախստական միանձնուհիները»
20.25 Ինքդ քեզ ռեժիսոր
21.45 Սերիալ «Վայրի հրեշակը»
23.30 Ֆուտբոլի Եվրոպայի առաջնություն. Ֆրանսիա-Հոլանդիա (ընդմիջմանը լուրեր)
01.45 Ֆուտբոլի Եվրոպայի առաջնություն. Սլովենիա-Նորվեգիա
03.45 Հերթապահ բաժանմունք

@rminco Global Telecommunications

Ինտերնետ ծառայություններ «ԻՆՏԵՐՆԵՏ» սրճարանում: Խանջյան 50: Հեռ. 575823:

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Պատուեր 1279 Տպաքանակը՝ 4000 Ստորագրված է տպագրության՝ 20. 06. 2000 Գինը՝ 100 դրամ